

ԱՐԱՐԱՏ ՂՈՐԵՔԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՅԵՎԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՈՒՂԴԱԳՐՈՒԹՅԱՆ

ՎԱՐԴԴԻԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԳԻՐՔ

ՀՀ ԱՐԱՐԱՏ ՅԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԳԻՐՔ

491.99-5  
n-47

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐՈԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՏԵՐԵՎԱՆ

1 9 3 8

1005-10

Հաստաված և ՀԽՍՀ Լուսմողկոմա ի կողմից

491.99-5  
L-57

ԱՐԱՐԱՏ ՊԱՐԻԲՅԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՅԵՎ  
ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԳԻՐՔ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՅԵՎ ՎԵՅՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

0231 20%  
ՏԵ

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1036

18 JUN 2013

Պատ. Խմբագիր՝ Ա. Ճռւղուրյան  
Տեք. Խմբագիր՝ Ի. Վարդանյան  
Հրբազը Մարտի թյան

# Վ ԴԱՍԱՐԱՆ



3169

38

## ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

(Տես § 2) 1. Արտագրել միայն պարզ ճախագասությունները:

I. Ամենքը քննեցին: Յես մնացի զարթուն: Գիշերն ես տեսակ տեղերում մարդը չի կարողանում քննել հազար ու մի ձեռն ել լսում, հազար ու մի բան ել յերևակալում:

Են անշուշտ գիշերվա հոփս եր, վոր շարժում եր սիմինդըըները, բայց ինձ թվում եր, թե Ովակիմ բիձու ասած պախրեն եր բոստանը մտեր: Գիշերվա մթության մեջ հեռվում սև կերպարանքներ եյին յերեռում ու կարծես շարժվում եյին:

Ու անքուն եյի յես:

Գիշերվա մի ժամին դուրս յեկա դափի գուռը:

Պարզ աշնանային գիշեր եր: Զոր ցուրտը սեղմում եր: Զորերը թշում եյին: Նրանք ել ասես քննել եյին, Ովակիմ բիձու նման ֆշացնում եյին խոր ու հանգիստ:

Բայց Քարվան-զոան աստղը արդեն դուրս եր յեկեր Մեր ձամբա ընկնելու ժամանակն եր: Յես վեր կացրի իմ ընկերներին: Նրանք շտապով հագան իրենց տրեխները, ու վեր կացանք դեպի Յեղնուտի կիրճը...

(Հովկ. Թումանյան. «Յեղջերուն»)

**ՈՐԻՆԱԿ՝**

## ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամենքը քննեցին: Յես մնացի զարթուն:

II. Մոսկվայի կայարանը զարդարված ել կարմիր գրոշներով, թարմ ծաղկներով ու կանաչներով:

Կայարանում մեծ բազմություն կա: Խորհուրդների մեծ մայրաքաղաքի լավագույն հարվածային բանվորները յեկել են գիմալորելու թանկագին հյուրերին:

Յնացքը կանգ առագ:

Վագոններից դուրս լեկան զանազան տարավով՝ մարդկիկ, Ներանց հագուստի աչք շլացնող գույները միախառնվել են այնպիս, վոր կարծես ծիածանն ե շողողում:

Հյուրերի խումբը քայլեց գեղի քաղաք: Թվում եր, թե մի վառ ծաղկոց ե շարժվում: Արևելքը հյուր ե յեկել հյուսիսին:

Ահա նրանք, այդ հյուր համարվող մեր յերկրի տերերը— Տաջիկստանի, Ռուբեկստանի և Թուրքմենստանի առաջավոր կոլտնտեսական կանալը ու տղամարդիկ են:

Բայց ահա մեծերի առջելց քայլում ե տասնմեկ տարեկան մի աղջիկ: Ո՞վ եւ Միթե սա ևս առաջավոր կոլտնտեսական ե, թէ ծնողներն են բերել այս փոքրիկ պիտոներ աղջկան...

Փոքրիկը քայլում ե հպարտ, հաղթական, վստահ: Նա կը քայլի սեղմած ունի ինչ-վոր գիրք:

## 2. Կազմել 5 պարզ նախապասություններ

(Տես § 2) 2. Արտագրել միայն բարգ նախապասությունները.

I. Խեռն ամեն որ գնում եր քաղաքային թատրոնի շուրջը գտնվող գեղեցիկ պարտեզը, նստում այնտեղ ու նայում հսկայական շինությանը: Հետո զլուխը կրծքին թեքված, ով զիտեինչ խորհրդածությունների մեջ, վերադառնում եր տուն: Նա նորոգել եր տվել մոր ձեռքով լուսամուտից փողոց շղթավաճկիթառը, նվագում եր: Յերբեմն գալիս եր ինձ մոտ և իմ առաջարկությամբ մանդոլինա նվագում: Մի անգամ թախանձեցի նրան, վոր կրկնի «Մադրիդի արքայի ամրություն»:

(Շիրվանզադե. «Արտիստը»)

II. Նոր մարդիկ չքայլոր գյուղացին յերիտասարդներիս առաջքաշեցին և սկսեցին նոր կրանքի հիմքը դնել:

Մերկեն հետեւց, հետեւց և հանկարծ զարթնեց: Թունդ կապալ խորհրդացին իշխանությանը: Հասարակական վորեն ժողովներ՝ առաջին ժողովականը նա յեր: Ներկայացում լիներ՝ դեռ մի ժամ առաջ Մերկեն կտնկվեր ակումբի գուանը: Ընտրական պայքարներին Մերկեն մասնակցում եր լեռանդով:

Յեկ ուրախ եր, ծիծաղում եր:

Մարդ կմեռներ գյուղում, կպատճեր, վոր լուր կը երեյին Մերկեյին:

— Մերկե, ախը Մոսովը մեռավ:

— Ի՞նչ անեմ, սաղ ըլեմ յնս, դու, խալիսը: Մեռավ՝ կթագենք:

III. Բայց ամենից շատ սիրում եր, վոր գյուղում մի նոր բան եյին սկսում: Ինչ կուզի լինի, թեկուզ ծառատունկի որք գնում եր, իր բահով պիտոներների հետ փորում, տնկիներ տընկում, յերգեր, կատակներ անում: Պիտոներները ծիծաղում ելին: Պատահում եր, վոր վոմանք ել ձեռք ելին առնում Մերկեյին: Զեր նեղանում:

— Ե՛, ինչ անենք, ջահել են, վաս չունի: Ի՞նչս պակսեց:

Ընթերցարանի անխուսափելի հաճախորդն եր: Յերբ կարգում եյին՝ խորին ուշադրությամբ, կապույտ, պսպղուն աշքերը, տնկում եր ընթերցողի աչքերին և հետաքրքրությամբ լուսմ: Լուսմ եր չինական, հնդկական բանվորների գործազուների քաղաքացիական կոիմսերի մասին և այնպես վառ եր պատկերացնում, կարծես այդ բոլորը կատարվում եր իրենց գյուղում,

(Դ. Դեմիքյան, «Մերկե»)

## Որինակ

ԲԱՐԴ ՆԱԽՍԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մերկեն հետեւց, հետեւց և հանկարծ զարթնեց: Յեկ ուրախ եր, ծիծաղում եր:

ՅԵՆԹԱԿԱ ՅԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼ

(Տես § 3) 3. Արտագրել յերակաները յեվ ցույց տալ, թե ի՞նչ հարցի յեն պատախանում:

Զմեռնամուտ որերից մեկն եր: Մութը դեռ բոլորովին չեք կոխել յերկիրը: Յերկինքը պղտոր եր զարնան ջրի պես: Կատաղի քամին վժժալով ներս եր պրծնում փողոցի մի բերանից թույնում եր առաջին պատահած մարդու գդակը, լիզում եր զետնից ազբու ու փոշին, ծեծում եր գոներն ու պատուհանները: Բարձրացնում պատովի եր տալիս մանրավաճառի խանութի ճանակայի կատար կախված ցուցանակն ու փախչում կորչում փողոցի մրւակերանից, կապտերավաղը, սանդուղն ուսին, փոքրիկ լապտերը ձեռքին, վաղում եր լապտերները վառելու: Փողոցի անկյունում

արդեն վասված լապտերը, հողմածեծ, ծռել եր գուշը և նայում  
եր շուրջը կեղտոտ ապակիների միջից մարդու ցափակար ճպռոտ  
աչքերի պես: Ամայի փողոցում մի փոքրիկ շուն կուչ եր յեկել  
մի փակ գոան առջե, սրթսրթում եր ամբողջ մարմնով և կաղ-  
կանձում:

Նախշքար Դավիթը գնում եր տոռն՝ մատների ծայրերը  
կապույտ արխալուղի զբանները դրած:

Որինակ՝

(Նար-դոս. «Հոգուն վրա հասակ»)

Մութը (Բնչը):

### ՀՐԴԵՀ ՆԱՎԹԱՀԱՆՔՈՒՄ

I. Հրդեհն արդեն բավական ընդարձակվել եր: Այրվում եր  
ամենաարդյունաբերական հորերից մինչ Կրակը, բուրգի ստորին  
մասից սրբնթաց դուրս գալով, շատապում եր ընդզրկել ամբողջ  
աշտարակը: Յերկնի հորիզոնի վրա ձգվել եր մթին ծխի մեջ մի  
լայն ժապավեն, վոր քամու լնթացքով տարածվում եր հեռու  
ու հեռու:

Մշակները շրջապատել եյին վիթխարի խարույկը և կազ-  
մել կինդանի ողակ սարսափած գեմքերի, ապշած աչքերի: Մի  
խումբ մտել եր ասպարեզ և աշխատում եր դուրս բերել բուրգի  
տակից մեքենան, միակ բանը, վոր կարելի յեր կրակից ազա-  
տել:

Միքայելի առաջին միտքն եր գտնել յեղբոր զավակներին  
ու կնոջը, Կրակը գեռ չեր հասել բնակարանին, բայց արգեն մո-  
տենում եր: Մշակներն աշխատում եյին բուրգի և բնակարանի  
մեջտեղում զտնվող նավթային ճակն ապահովել կրակից: Յեթե  
մակը վառվեր, ամբողջ տունը կորած եր:

— Յեկեք յետեիցո, — գոչեց Միքայելը, դառնալով առաջին  
մշակներին:

II. Շրջանից բաժանվեցին յերեք հոգի՝ Չուպրովը, Ռասուլը  
և Կարապետը, Նրանք հենց նոր եյին հասել հրդեհի տեղը և դեռ  
չգիտեյին վոր կողմութիւն եւ: Ամենից առաջ վազեց Չուպրովը,  
Հրելով ընկերներին աջ ու ձախ: Ամբոխը, տեսնելով հսկային  
անդուխտի վրա, վոգնորվեց: Մի քանի վայրկան կարմիր շա-  
պիկը փայլվեց բոսրագույն լույսի ներքեւ և չքացավ:

Մուխն արդեհն զվարատել եր ամբողջ տունը: Մի քանի  
րոպե ևս, և ամեն ինչ կարող ե ուշ լինել: Յեթե կրակ ել չլի-  
ներ, ներսում յեղողները պիտի ծխից խեղվեցին: Նավթային  
հրդեհը նման չե սովորական հրդեհներին: Հանքերում ու գոր-  
ծարաններում կրակը լիբեմ տարածվում և հողմի արագու-  
թյամբ: Այստեղ այրվում ե ամեն ինչ, նույնիսկ ոյն ու յիշ-  
կիրը, ամենուրեք տարածված նավթի ու գաղի շնորհիվ: Շատ  
անգամ մարդիկ հաղիվ լուսմ են շվիկների սուրբյաները, և արդեն  
նրանց կյանքը վտանգի մեջ եւ Ֆեռ լավ ե, յեթե կրակն սկըս-  
վում ե բուրգից կամ վորհե շենքից: Իսկ յեթե սկսվել ե նավթ-  
ամբարից, վտանգն անխօսակելի լիւ: Ամբարի ազատ տա-  
րածության մեջ կուտակված գաղը, ընդհարվելով կրակի հետ,  
պայթում ե հարյուրագոր թնդանոթների ուժով, և կրակի հեղե-  
ղը սփալում ե չորս կողմ:

(Ելրգանգաղե. «Բառ»)

(Տես § 3) 4. Սրբագրել ամբողջը յեվ ընդգծել յենքակաները

Քաշեց արել ծիլերը հողից,

Իր շողապայծառ, լույս մագիլներով.

Ծփաց կանաչը, ծածանվեց հովից

Արտերի թալին հորձանքը սիրով...

Շուրջը - թնդացող անսահմանություն,

Ծիլերն են խմում շեթերը լույսի.

Ծոփի պես մարմանդ ալիք են առնում

Արտերը հասնող, արտերը հույզի:

Արտերը դառնում են խնդության մի ծով,

Մեր վաշտերն անցնում են արտերի միջով:

(Ելրազ)

(Տես § 3) 5. Սրբագրել սուրոգալները յեվ ցուց տալ, թե  
ին, հարցի յե պատասխանում յուրաքանչյուրը.

I. Ահա Լավաբի վիթխարի ուսին  
բազմում ե արփին թարժացած ուժով,  
սարեր ու ձորեր իրար յերեսին  
նայում են, ճպտում ամպի մշուշով...

Վերջին ձյուներն ել արդեն հող ընկան,  
արտասվեց իսկուսն լեռների հսկան,  
ամեն մի թփից բյուլբյուլ և խոսում,  
և գալար հովիտ, և ժայսի կրծքեր,  
արձագանք տալով, գարուն են հնչում:  
Զմռան փարախից հովվական յերգեր  
զեփյուսի թեոլ սարերն են թաշում:  
Շաղկալից աշխարհ անվերջ ձորերի  
բացում և, ժպտում կոկոնից զվարիտ,  
փարթամ գեղության վողին Գուգարքի  
շնչում և գարնան բույրով անազարտ:  
Ամպերն ել իրար համբյուրներ տալով,  
չվում են կայտառ, Լալվարը գրկում,  
Առաջին անգամ խիստ վորոտալով,  
Գուգարք աշխարհին վողջույն են յերգում:

### Որինակ՝

Բազմում ե (ի՞նչ և անում):

II. Վերջացավ արդեն վոչխարի կիթը,  
Կաթսաներ տարան թարմ կաթնով միքը,  
Մեկն ել զզակը շարժելով ողում,  
Դեռ գառնարածին՝ «հեյ լեկ» և կանչում,  
Յերկար չանցնելով, սարի գագաթին  
Գառների կայտառ հոտը յերեաց,  
Խառնվելով նրանք մայրերի հոտին,  
Բերկրանքի հույզով մայում են ցրված,  
Կանչում են, բայում գառըն ու մաքին  
Անուշ ձայներով փնտում են միմյանց,  
Վորը գոնելով իբա գառնուկին,  
Ծծել և տալիս, փայելով սրտանց,  
Վորը խաղում ե մոր հետ կուշտ փոլով,  
Վորն ել մնում և տիսուք մայելով.  
Յեկ ամեն անգամ գառը մեր տալիս,  
Կարծես թե անուշ համերդ են տալիս:

Յեկ շուտ ջոկելով մալրերը գառնից,  
Հովվիվը քշեց նրանց զեպ արոտ,  
Մահակն ել ուսին զառները բինից  
Տարավ գառնարած սառն ազբյուրի մոտ  
(Վ. Միքայել. Շալվարի վարսը)

(Տես § 3) 6. Արօագրել միայն ստորոգյալերը, ավելացնելով  
ոճանգակ բայց այնուեղ, զուրեղ բաց և բողնված:

I. Գնում և ուրիշի ապրանքը զանում  
Թաքուն հավաքում իր հանգն և անում,  
Աղմուկով քշում իր հանգի միջից,  
Շարափ և առնում անմեղ տիրոջից:  
Պարում և ձմռան հարսանիքներում,  
Կամ մեծավորի թեփշի յել լիզում,  
Մինչեւ մի քանի շահի յել ճարում,  
Են ել տանում և լափում թիֆլիսում:

(Հով. Թումանյան. «Հասաչանք»)

### Որինակ՝

գնում ե, զանում ե, հավաքում ե...

### II. ԶՄԵՌՎԱ. ԻՐԻԿՈՒԽՆԵՐ

Հողմը մեզով յերկինքն առնում,  
Գալարում ե բուքը ձյան,  
Մին՝ մանկան պես լաց ե լինում,  
Մին՝ վոնում ե զերթ զազան,  
Մին՝ վալրենի սուլում պեսպիս,  
Աղմկում և տանիքում,  
Մին՝ ուշացած ճամբորդ, ասես՝  
Լուսամուտն ե նա թակում:

Մեր խրճիթը, ազքատ ու հին,  
Յեկ մթին ե, և տխուր.  
— Ի՞նչ ես նստել պատի տակին  
Իմ պատակս, եղակս լոււր  
Հոգնել ես զու փոթորիկի  
Վոռնոցներից խելագար,

ԹԵ ՆԻՐԻՌՈՒՄ ԵԱ ՔՌ ԻԼԻԿԻ  
ԲՂՋՈցէ տակ միալար:  
Հողմը մեգով յերկինքն առնում  
Գալարում և բուքը ձյան  
Մին՝ մանկան պես լաց և լինում,  
Մին՝ վոնում և զերթ դաղան:

(Ա. Ս. Պուշկին)

### III. ԿԱՐԾԵՍ ԹԵ ԴԱՐՁԵԼ ԵՄ ՑԵՍ ՏՈՒՆ...

Կարծես թե դարձել եմ յես տուն,  
Բոլորն առաջգանն ե կրկին.  
Նորից զու հին տեղը նստում,  
Շարժում ես իլիկը մեր հին.  
Մանում ու հերթաթ ես առօւմ,  
Մանում ես անվերջ ու արագ.—  
Սիրում եմ պարզկա քո լեզուն  
Չեռներըդ մաշված ու բարակ;  
Նայում եմ մինչև վոր անզոր  
Գլուխը ծնկիդ ե թեքվում,  
Նորից յես մանուկ եմ այսոր,  
Դրախտ ե նորից իմ հոգում:  
Արել հանգչում ե հեռվում,  
Գետից բարձրանում ե մշուշ,  
Հերիաթըդ անվերջ որորում,  
Իլիկըդ խոսում ե անուշ...

(Վ. Տերյան)

(Տես § 3) 7. Արտագրել բաղադրյալ սուրոգյալները,  
ավելացնելով ոժանգակ բայց այնուզ, վարել  
բաց և բողնջած.

Ծովանը մի կարմիր կով եր — յեղջուրների ծալքերը յետ  
դնացած: Մեջքն ուղիղ եր, յետեր մասը փոքր ինչ տափակ՝  
թամբի նման, վիզը հաստ եր, բոխալը կախ, գլուխը դիք, ձախ  
ականջի ծայրը կարած եր նշանի համար, իսկ աշ աղոքը խարա-  
նած «Ա» տառով, վոր առաջին հայացքից պարզ չեր յերեսում  
և թվում եր շան կծածի հետք: Յեկ վորովինետ զահել եր —

մազերը կոկ ելին ու փայլուն՝ ոժած վարսերի նման: Կուրծքը  
մեծ եր ու սպիտակ: յերբ քայլում եր, ավելի յեր մեծանում և  
աչքի ընկնում կարմիր փորի տակ: Մաքրասեր ու սակավապետ  
եր: աղբատ տեղեր յերբեք չեր նստի: անձրևների ժամանակ սիւ-  
րում եր կանգնել բաց տեղ և թախծոտ աշքերով նայել այդ զար-  
մանալի ջրին, վոր թափվում եր վերևից—հայտնի չե ձեմ ձեռ-  
քով և ինչու համար: Առաջ նա շատ ուրախ և աշխույժ եր:  
կպատահեր, որինակ, պողերով ցելերը քանդելով և գլուխը թե-  
քած՝ կկովեր հասակակիցների հետ, կհաղթեր, կհաղթվեր, բայց  
յերբեք չեր կորցնի իր զվարթությունը: Վերջին յերկու ամիւ-  
սը, սակայն, տխրությամբ խուսափում եր ալդախի կոփլսերից: Այժմ  
նրա խոշոր աչքերը լի եյին անհուն թախիծով ու տխրու-  
թյամբ: Արոտի ժամանակ նրա աչքերը հաճախ արցունքուում  
եյին և նա մոլորված՝ կանգնում եր մտածումների մեջ ընկած:  
Մտածում եր տերերի վերաբերմունքի մասին և խորը հառա-  
չում քթածակերով: Հասաշում եր ու հիշում իր ջահել որերը,  
յերբ բոլոր տնեցիներն այնպես փայտայում եյին իրեն: Հիշում  
եր, յերբ հորթ եր, ուրախ թռչոտում եր, մտնում տերերի տուն,  
շոր եր ծամում, ջուր եր խմում ամաններից... և տերերը յերբեք  
չեյին ծեծում իրեն: ի՞նչ լավ եր...

(Վ. Զորյան. «Ծովանը»)

### Ո Ր Ե Խ Ա Կ

Բաղադրյալ ստորոգյալ

Կովեր, ուղիղ եր, հաստ եր...

8. Կազմել բաղադրյալ ստորոգյալ ունեցող 10 պարզ նա-  
խադասություն:

(Տես § 3) 9. Արտագրել ընդգծել յերական յեվ ստորոգյալը  
յեվ փակագծերում ցույց տալ, քե ինչ հարցի յեն  
պատասխանում սուրոգյալները.

I. ...Ահա վառարանի մեջ այրվում և անտառից բերած  
փայտը: Այստեղ նրանք կազմում եյին ահազին կանչազարդ  
ծառեր:—Նրանց ճյուղերի շվաքի տակ հանգստանում եր հոգնած  
հովիվը: Նրանց գագաթին թռչկոտում և զվարճանում եյին ան-  
թիվ թռչնիկներ: Մարդը կացնի սուր բերանն ուղղեց ծառի  
հաստ բնին Ծառը թափալից գետին:

### Ո Ր Ե Խ Ա Կ

Մառը թափալից (բնչ արավ) գետին:

## ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

(Տես § 4) 10. Յուլյ տալ յուրաքանչյուր նախագասության  
գլխավոր անդամները յեվ երանց լրացումները.

I. Լեռներից քնքշանքով հոսում և ծաղիկների բուրմունքը:  
Զիունի ծանրությունից կոտրվեց մի չոր ճյուղ:  
Իմ աշխուցի ձին հետեւ նըա որինակին:  
Արեի ճառագայթները վոսկեզոծեցին լեռներն ու սարերը:  
Լեռների բարձրությունների վրա հրաշալի ծիածանն իր  
կամարը կապեց:

Գյուղի աղջկերը խուժբախումը դնում են դեպի կանաչ  
մարգագետինը:

II. Սանրակատար հոպոպն անհանգիստ վոստոսում եր:  
Գիշատիչ բաղեն վրուացող ձայնով վեր ու վալը եր  
սլանում:

Խոտերի և ծառերի վրա փայլում եր աշնանային առատ  
ցողը,

Ծառերի կախ ընկած ճուղերը շուտ-շուտ դիմչում եյին  
նրանց գլխին:

Սպիտակ տան մեջ ծերունին ապրում եր մենակ:  
Ծերունին աղատ ժամերին սիրում եր պտտել անտառում:

Որինակ՝

Դիմավոր անդամներ

բուրմունքը

հոսում և

Լրացումներ

ծաղիկների

{ լեռներից

քնքշանքով

(Տես § 4) 11. Սրբագրել պարզ համառու նախագասություններն  
առանձին, պարզ ընդարձակ նախագասություններն առանձին.

Միքայելը զարթնեց, կրակը հեռու չեր: Սարսափն անցավ  
ուղեղին, խելքը մթագնեց, Ընդարձակ բակը լցվել եր ու ուրվա-  
կաններով, Հրդեհն ընդարձակվել եր, Ալբում եր ամենաարդյու-  
նաբեր հորերից մեկի բուրգը, Մշակներն աշխատում եյին:

Շրջանից բաժանվեցին Չուպրովը, Ռասուլը և Կարապետը:  
Ցերեաց Չուպրովը, Ամբոխը վոդերվեց: Ծուխն արգեն շըջա-

պատել եր ամբողջ տունը: Հանքերում տարածվում եր կրակը:  
Լեակը բռնկվեց: Կրակն անմիջապես կլանեց այն: Տիրում եր  
դժոխային խառնաշփոթություն: Գոյացել եր մի զմայլելի հրե-  
ղեն սարսափ: Պատշաճի ծայրում Դավիթը հանդիպեց քրոջը:  
Դավիթը վազեց ներս: Ծուշանիկը մնաց անշարժ: Բուրգը մեր-  
կացել եր: Միքայելը ուշաղը ություն չեր զարձնում էրդեհի վրա:  
Քրտինքը հոսում եր Միքայելի յերեսից: Հազուսալ թրջվել եր:  
Հանկարծ ամբոխի ողակից անշատվեց մնկը: Դա Միքայելն եր:  
Դավիթը մի վայրկյան նալեց Միքայելի գեմքին: Միքայելն  
աղաղակեց: Նկատվեցին յերեք հսկա պատկերներ: Սյլսա դժվա-  
րություն չկար: Մի բոսկ անց՝ ամենքն արդեն կրակի սահման-  
ներից դուրս ելին:

(Ծիրվանդակ, «Բառու»)

Որինակ՝

Պարզ համառու նախ.

Միքայելը զարթնեց

Պարզ ընդարձակ նախ.

Ընդարձակ բակը լցվել եր ու  
ուրվականներով:

12. Կազմել 10 պարզ համառու նախագասություն յեվ  
նույնքան պարզ ընդարձակ նախագասություն:

13. Յուրաքանչյուր մի խումբ բառերից կազմել  
նախագասություն, վերջում զենքով վերջակեա.

1. Գյուղացի, Համբո, տուն, կոփի, ընկել եր:  
2. Համբոն, ուզում եր, իր, տասներկու, տարեկան, Դիքոր,  
տանել, քաղաք:  
3. Տանեցիք, ու, հարևաններ, գաւ մինչև, գյուղ, ժայր,  
Դիքոր, ճամբա, զնել:  
4. Համբոն, քաղաք, Դիքոր, ծառա, տալ, բազազ, Արտեմ,  
տուն:

5. Տեսան, վոր, տուն, չի կարողանում, ծառայել, խանութ,  
տանել, Դիքոր:

6. Խանութ, գուռ, կանգնել Դիքոր, մուշտարի, կանչել:

7. Զմեռ, գալ:

8. Բուք, թոչել քաղաք, վրա:

9. Ճուք, զարկել Դիքորին:

10. Գիքոր, անկողին, ընկնել:
11. Հիվանդ, պառկած եր, Գիքոր, քաղաք, հիվանդանոց:
12. Եստեղ, գտնել, նրան, հայր:
13. Գիքոր, տաքության մեջ, չիմանալ, հայր, գալ:
14. Մի, յերկու, որ, հետո, համբոն, գնալ իրենց գյուղ:
15. Նա, թաղել եր, Գիքոր, և կուն, տակ, տանել, նրա,  
շորերը:

## ՀՆՉՅԱԽՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բաղաձայններ

Մ, Ն

14. Վորուել, թե բաց բողածը վո՞ր տառե և՝ Մ-Ե, թե՞ Ն-Ե,  
լրացնել ու գրել.

Հիմնարկությա-բ, բա-բակ, խ-բակ, հա-բակ, թ-բուկ,  
գ-բեթ, ապստա-բ, թ-բիկ, կշառա-բել, հա-բերել, հա-բուրել,  
հա-բարձում, կաղա-բ, վագերությա-բ, ա-պ, զա-բյուզ, թա-բ,  
ա-բաստանել, ա-բար, ա-բարտակ, հա-բավ, ա-բոխ, ա-բողջ,  
ա-պաշող, ա-պաշու, ա-պրոպ, բա-բասել, ա-փոփել ա-բնական,  
ա-բաժան, ա-բան, ա-բավական, ա-բեղուն, ա-բերբի, ա-բուլս,  
ա-բորբոս, ա-բովանդակ, ա-բուժելի, ա-փետուր, ա-պատիվ,  
ա-պաճուճ, ա-պայման, ա-պատասխան, ա-պատեհ, ա-պատճառ,  
ա-պարտելի, ա-պետք, ա-պարտ, ա-պիտան, ա-պտուզ, ա-պլճ-  
նասեր, ա-փոփոխ, ա-փառունակ, ա-փոխադարձ, ա-փույթ  
ա-փորձ, ա-փուշ:

Որինակ՝

խմբակ, թմբիկ, անփուշ:

Զ, Զ

15. Արտագրել, վորուել՝ Զ, թե՞ Զ վետ է գրել գծիկի փոխարեն.

Անուբ-, ար-, գար-ին, ար-առ, ար-սապ, բաղար-, լուր-,  
շր-եր թր-ել, մր-յուն, յեր-անիկ, վեր-, շր-ան, շուր-, վոր-,  
շր-մոլիկ, աղ-ամուզ, զեղ-ել, այծեղ-յութ, զղ-ալ, զաղ-,  
յեղ-երու, շղ-իկ, վող-ույն, աղ-իկ, զեղ-ուկ, շեղ-, վող-ախոն:

16. Արտագրել յեզ գծիկների տեղ գրել տառեր, վորուելով՝  
Զ, թե՛ Յ.

Անվերագալը, աշխատավարչ, արականք, արունք, հարչ,  
արակ, արակուրդ, արան, մրել, բարչ, բարսարերչ, դարչալ,  
դերակ, ընդարչակ, խուրչ, համարչակ, մանկաբարչ, որավարչ,  
վարչ, փորչ, փորանք, ատաղչ, գուղչ, քաղչ, դաղչ, դեղանիկ,  
քաղը, իղչ, մաղչ, մելամաղառա, գեղչ, ջրահեղչ, մղավանջ,  
շնչահեղչ, հեղամառուկ, բաղչանք:

Դ, Թ

17. Արտագրել, վորուելով՝ Դ, թե՛ Թ պետք է գրել գծիկների  
փոխարեն.

Մարչ, արուն, կրություն, թերչ, բարչ, վարչ, բերչ,  
լյարչ, զարչ, զվարչ, մօրել, հարչ ճանապարհ, հարչագողի ճա-  
նապարհ, կովի հորչ, հորչ անձրել, խալողի վորչ, վորչը սողում  
ե, կարալ, հերչ, փարչամ, նյարչ, կենանի, խնիր, մարմի  
անամներ, ընլիք:

Բ, Փ

18. Արտագրել, վորուելով՝ Բ, թե՛ Փ պետք է գրել գծիկների  
փոխարեն.

Արիկ, վորչ, հարուխ, յերչ, յերեմի, բորչ, յերներանդ,  
ուրաթ, դարին, լիրեսրիչ, ներան, նուրչ, արյունարչու,  
աղչ, վողչ, աղչյուր, յեղայր, արիտ:

Խ, Չ

19. Արտագրել, վորուելով՝ Խ, թե՛ Չ պետք է գրել գծիկների  
փոխարեն.

Ար, աշ, բաշ, տաշտակ, թաշ, աշքատ, թութ, մաթել  
պանդուտ, ժտել, զմբուտ, խեղել աշբյուր, հաթել թուպ,  
լաշ, խրուտ, ուշ, յերատիք, հալկանդուտ, սանդուտ,  
վոր, ուտի ձագ, մած, վոշ, դեծ:

## ՅԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐ

20. Գրել Ս.Յ, Ը.Յ, ՈՒ.Յ, ՅՈՒ յերկնչյուններ ունեցող բառեր.

Որինակ

Բայց, հնդյակ, բույս, բյուրու

ԻԱ, ՅԱ

21. Լրացնել բառերը, վորուել, թե գծիկների տեղ Ի՞ պետք է  
գնեն թե՛ Յ.

Անգլա, Ֆրանսա, պրոլիտարատ, սոցալիզմ, ծահան,  
Մարամ, յերկաթա, արծաթա, վոսկա, փայտա, մակ, թակ,  
լանալ, ձավոր, գործական, սենակ, մանակ, մատան,  
արգական, վորդական, ասոցացա, քիմա, ոֆելա, Մանա,  
ժենա, լյուսա, վոլոդա, Կոստա, քիմա, մատերալ, դաստ-  
արակ, գակ, հանաբ

22. Հոլովել իետեվյալ բառերը (միայն յեղակի).

Տղա, կաթսա, շղթա, յերեխա, շուկա:

## Յ ԶԱՅՆԱԿԱԳԸ

23. Գրել մի շարք բառեր, վորոնք ունեն Ս.Յ.Յ. կապակցություն,

Որինակ

հայաստան, տղայականու

24. Գրել մի շարք բառեր, վորոնք, ունեն Ս.Յ.Յ. կապակցություն,

Որինակ

հարվածային, լեռնային, կային, կարդայիսու

25. Գրել մի շարք բառեր, վորոնք ունեն Ս.Յ.Յ. Ս.Յ.Ո, Ս.Յ.Ո  
կապակցություններ,

Որինակ

հայելի, վայելել, շուկայում, կաթսայում, նայողու

26. Գրել մի շարք բառեր, վորոնք ունեն Ս.Յ.Յ. կապակցություններ,

Որինակ

զրելի, վոստրելի, հասցելիու

27. Գրել մի շարք բառեր, վորոնիք ունեն ԵՅՍ, ԵՅԱԻ  
կապակցությունները.

Որինակ՝

Կյակ, գործունեյություն...

28. Գրել մի շարք բառեր, վորոնիք ունեն ԽՍ, ԽՌ, ԽՌԻ,  
ԽԾ կապակցությունները.

Որինակ՝

Միակ, աղիողորմ, միություն, Քանիել:

### ՎԱՆԿ ՅԵՎ ՏՈՂԱԴԱՐՁ

(Տես § 7) 29. Արտագրել բոլոր բազմավանկ բառերը,  
վանկերի բաժանելով.

#### I. ԳԱՐՈՒՆ

Կրկին յեկար, անուշ գարուն,  
Նեղ փողոցիս ծառին վտիտ  
Բերիր քնքույշ ծիլ ու ժըպիտ  
Յեվ կանչեցիր դեպի հեռուն.  
Քո մատներով նուրբ ու քնքույշ  
Թմրած ու թույլ սրտիս դիպար,  
Հողմով տարար ամպը՝ կապար—  
Լազուր ու լուրթ գարուն անուշ:  
Նոր կարոտով դեպի հեռուն  
Կանչում ես ինձ և կախարդում:

(Պ. Տեղյան)

Որինակ՝

Կըր-կին յե-կար, ա-նուշ գա-րուն...

#### II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՐԳԻ

Մի յերգ գիտեմ յես աննման  
Հզոր մուրճի թափի նման,  
Վորոտի պես հատու, խրոխտ  
Մի յերգ գիտեմ յես աննման:

Ծնվել ենա մութ հանքերի  
Մետաղակուռ յերակներից.  
Ու ձայն առել քլունգների  
Ճասկոտ ու շեշտ հուր-զարկերից:

III. Մնունդ առել, ջիղ ու այրուն՝  
Բանուկ, ուժեղ քազուկներից,  
Գործարանը խանդ ու ավյուն  
Շնչել նրան իր ժխորից:

Հմայք ունի յերգս այնպես,  
Հոգսի ժամին թե վոր յերգես՝  
Թախիծ ու վիշտ կչքանա—  
Լքված հոգուն նեցուկ ենա:

Հեյ, իմ յերգը միշտ աննման  
Հզոր մուրճի թափի նման,  
Վորոտի պես հատու, խրոխտ  
Մի յերգ գիտեմ յես աննման:

(Հ. Հակոբյան)

16. Գրել 10 միավանկ յեվ 10 բազմավանկ բառեր հետեւյալ որինակով՝

Միավանկ բառեր

առուն

բազմավանկ բառեր

դասարան

պատ և ալլն

ուսուցիչ և ալլն:

(Տես § 7) 30. Խմբավորել միավանկ բառերն առանձին,  
բազմավանկ բառերն առանձին, բազմավանկ բառերը  
բաժանել վանկերի.

#### ՄԱՐՍԱՄԱՆ ԺԱՄԻՆ

I. Մուրճը ձեռքներիդ մաքառման ժամին,  
Վորոտ ու թափով զարկեցնք սալին,  
Առանց վարանման, կայծակի նման  
Զարկեցնք արտգ՝  
Քաջի ջեռուցած յերկաթն և ապահով

Յեկ վմց և նրան, ով այս վեհ ժամին  
Յեկ կվարանի, և կթուլանա,  
Ով իր ձեռքերի կոշտերի վրա  
Հույս չի ունենա:

II. Յերկաթը շիկնած կսառի այն ժամ,  
Դեհ, յեկ ու նորից վասիր դու քուրան,  
Նետիր զանդվածը, լարիր նորից Զանք,  
Վոր հուղվի կրակ...  
Վճչ, զարկենք, քանի յերկաթն և տաք-տաք:

Մուրճը ձեռքներիդ պատրաստ միշտ մնա,  
Իսկ ով մաքառման գեռ չի ընդունակ՝  
Շարքերի միջից թաղ անհետանա, —  
Թույլերի չետեղ, վոչ գործը կատակ...  
Դեհ, զարկենք, քանի յերկաթն և տաք-տաք:

(Հ. Հակոբյան)

Որինակ՝

Սիավանկ

ու  
ե

Բազմավանկ

մուրճը, ձեռքներիր,  
մաքառման, ժամին...

## Ը ԶԱՅՆԱՎՈՐ

ՅԵ-ԳԵՒ ՎԱՐՈՆԵԿ ԽՈՂՈՎ ԻՆՏԵՎՅԱԼ ԳՈՅԱԿԱՇԵՆԵՐ.

Գիրք, գրիչ, մատիտ, մարդ, բարձր, փորձ, դորժ, զանձ,  
հարց, լուցկի, դաշտ, դեղձ, բազմանք, աշխատավարձ, արձագանդ,  
արձան, գերձակ, խուրձ, սաղարթ, կարթ, նյարդ, զարդ, թախտ,  
տախտակ, զարբին, նրբույսն, արփի, բախտ, աղբյուր, շղիկ,  
տղա, կաթսա, բարբառ, ֆրանսիա, բամբակ, շղթա, յերեխա,  
գարի, գինի, հայելի, կրիա, տմպ, յեղիսուր, աշխարին, հանա-  
պարի, շնորհք:

ՅՅ. Թույր ինտերվոր ձեվերով վանկերի բաժանել ինտեվյալ...  
բառերն այնպիս, ինչպես տողագործ անելիս.

Գլուխ, Գրիգոր, մտմտալ, անդնդախոր, գրգուել սկզբնա-  
կան, կոլտնտեսական, խորական, ձմեռ, պղտոր, բարձրանալ  
գրպան, ալնդացած, աննպատակ, աննման, խղճուկ, տնակ, կրկին,  
ցրտահար, նոտած, ծնունդ, վնդստալ, մաքճքած, կտրել, աղջիա,  
շշվացնել, բոնված, մտածել, ծրկիր, ծրցան, վնթինթալ  
սրթութալ, տրորել, պղնձագործ, փուլել, ճչալ, գցել:

Որինակ՝

պը-զընձագործ, պղընձագործ, պղնձագործ:

33. Վանկերի բաժանել ինտեվյալ բառերը.

Սկավառակ, սկեսուր, սկսել, սկիզբ, սկզբունք, սկզբնավո-  
րություն, սկյուռ, սկուտեղ, սկնակ, սթափել, սպանախ,  
սպանել, սպանդ, սպանդանոց, սպառազինություն, սպառել  
սպասողական, սպասնալիք, սպասնալ, սպասավոր, սպեղանի,  
սպի, սպիտակ, սպունդ, սպիտակուց, ստադիոն, ստահակ, ստա-  
մոքս, ստանալ, ստեղծագործություն, ստիպել, ստուգ, ստոր,  
ստվեր, ստրկություն, սփյուռ, սփոփանք, սքանչանալ,  
սքողել, զբաղմունք, զբոսանք, զգալի, սպաստասիրտ, զդույշ:  
զգեստ, զգուշություն, զգոնություն, շտապել շտեմարան,  
շպարանք:

34. Գրել և ձայնավորով սկսվող 15 բառ:

ՀՆՉՑՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

(Յես §. 8) 35. Գրել ինտեվյալ բառերի ինչյունափոխության  
յենթակած ձեվերը.

Գրքի, սրտի, ջրի, կրի, կացնով, միջով, ծխի, գլխին,  
անդնդից, մրից, թղթի, բրնձի, կրծքից, մաքից, մթնի, ցրտից,  
աղջկա, գծեր:

Որինակ՝

գրքի-գիրք:

36. Գրել 10 բառ, վորոնք յենթակառամ և ն ինչյունափոխության,

Որինակ՝

առւն-տնակ

## ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ԱՐՄԱՏ ՅԵՎ ԱԾԱՆՑ

(Տես § 11) 37. Գանել ընդգծված բառերի արմատները.

Կանաչ, վեթխաբի ընկուղենու տակ,  
իրենց հասակի կարգով ծալպատակ,  
Միասին բազմած,  
Մի շրջան կազմած.  
Քեզ եյին անում  
Յեվ ուրախանում  
Մեր հսկա պապերն ու մեր հայրերը՝  
Գյուղի տերերը:  
Մենք՝ առույգ ու ժիր գեղջուկ մանուկներ՝  
Յերեք դասընկեր,  
Նրանց առաջին գլխարաց կանդնած,  
Զերքներս խոնարհ սրտներիս դրած,  
Զիւ, ուժեղ ձայնով նրանց ըսպասում  
Տաղ եյինք ասում:

(Հով. Թումանյան. «Հին որհնություն»)

### Որինակ՝

Ընկուղենու—ընկուղու...  
Հասակի—հաս

(Տես §§ 11, 12, 13 և 14) 38. Սրբագրել բաժանել բառերը  
արմատների յեվ ածանցների, ընդգծել ածանցները.

I. Վորսկան, թփուտ, անշունչ, ուժեղ, հրեղեն, ընկուղենի,  
ցալուտ, սրտուտ, սիրունիկ, քամիչ, աշակերտական, հակադարձ,  
հակասել, համանուն, համեղ, արտազրել արտահայտել, արտա-  
սահման, դժուն, աղեղ, տղետ, մակերես, համագումար, մատնոց,

ապերախտ, ապարախտ, անհարմար, բացակայել, բաղականչել  
գերհարվածային, գերբնական, համագումար, յենթակայան,  
ներգրում, պարագիծ, վերադիր, վերանայել չտես, բուրավետ,  
հեռավոր, սարվոր, տնվոր, ութերորդու չորրորդ, յերրորդ, տաս-  
նամյակ, վեցյակ, յերկաթյա, պոդպատյա, ամաչկոտ, պոչատ,  
ճանապարհորդ, մեղմորեն, վարժություն, վրաստան, գլխավորա-  
պես, ընկերունի, ուսուցչունի, պետք, գաշտեցի, գյուղացի,  
գնալուն, հավանորեն, խելք, մասցորդ:

### Որինակ՝

վորս—կան, ան—շունչ, ուժ—եղ... ապ-արախտ

II. Հիմնական, հատկություն, անսահման, քաջություն,  
վճռականություն, տոկունություն, անխուսափելի, բարք, մար-  
տիկ, հերոսություն, հերիաթային, գունավորում, վարչություն,  
կարծիք, հաղթանակ, ձեռք, զինվոր, ցուցում, անձնավորություն,  
մարտական, անհավանական, անսահլի, դժվարություն, փառք:

III. Առաջնորդ, ցոլք, համաժողովրդական, բոլորովին,  
բանակային, տեսողություն, խորհրդային, լավագույն, գեպք,  
պատմություն, զիրք, ուղղակի, ուզմական, քաղաքական,  
հարձակում, մոտիկ, կանոնափոր, տասնյակ, թռուցիկ, անվիճե-  
լիորեն, զորք, սավառնակ, հետափոր, փատահություն, ապարայուն,  
թաքստոց, հանդիսավոր յերգեցողություն, փայտե, հենակ,  
յերգիչ, ամենաբարձր, գերհարվածային, վերադարձ, յենթակա-  
սպաշնորհ, տրամագիծ, արտազրություն:

39. Նախորդ վարժուքունների բառերի ածանցներից կազմել  
նախածանցների յեկ վերջանցների աղյուսակներ  
նետելիալ որինակով՝

Նախածանցներ	Վերջածանցներ
ան	ոց
յենթ	ովին և այլն

## ԱՆԱՆՑՆԵՐ

**40.** Կազմել բառեր Ք վերջածանցի ողբությամբ՝  
հետեվյալ արմատներից.

խոս, աշ, վոր, ձեռ, ուն, միտ, յերկին, բեր, վար, խել, գիր,  
պետ, դիր, վեր, տուր, ձիր, պարտ, մեղ,

**Որինակ՝**

Սրմատ

իսոս

Ս. ծանցավոր բառ

խոսք

**41.** Գրել հետեվյալ ածանցներն ունեցող հինգական բառ.

Իչ, որդ, ային, ուկ, ուն, յուն, յա, երորդ, ույժ, վածք,  
ք, յակ:

**Որինակ՝**

Ս. ծանց

իչ

Ս. ծանցավոր բառ

ուսուցիչ, գրիչ և այլն:

## ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

(Տես § 15) **42.** Վորոել, քե ինչ արմատներից են բաղկացած  
բարդ բառերը, անշատենակ հոգակապը յեվ ածանցները.  
Անդգծել արմատները.

**I.** Ջմենամուտ, լազարավայս, հողմոծեծ, վասնաման,  
տուննապես, տննպատակ, մազակաբ, ուժգին, տկամա, տնգին-  
տաղրելի. վոչքոք, նախքար, տնխիզ, ապերախտ, հարված,  
տնոգուտ, վատնպավար, հաբատե, վողնաշար, կաթիլք, ձեղք,  
դոպուոց, արագորին, մտապատկեր, մտատանջություն, ուշա-  
գրություն, շնչառություն, ջղայնություն, վերադառնալ, պղնձա-  
փոք, արհեստավոր:

**Որինակ՝**

Ճմենամուտ—ճմենն-ա-մուտ:

Նախածանց	արմատ	հոգակապ	բարդ բառի յերկրորդ բաղադրիչ	վերջածանց
ուն	ուիմ	—	ուր	ելի

**II.** Կիսապարտիզանական, մանրամասնություն, կազմակեր-  
ույիւ, ուղեկից, քաջագործ, գործակից, փառապանծ, գնդացիր,  
խորհրդակից, ցանկապատ, միառժամանակ, խոսակցություն,  
թատերախումբ, հրացան, հանդիսատես, մեծամասնություն,  
յուրահատուկ, կարգապահ, կազմալրուծում, ճակատամարտ, զրա-  
հապատ, յերեսնիվայր, խելահեղ, տեղափոխություն, հրածգու-  
թյուն, հոգնատանջ, ինքնայես, քսանհինդ, հետաքրքրվող,  
միահամուռ, պարերդ, ուշաթափություն, պահեստապետ, կերա-  
պահ:

(Տես §§ 12, 13, 14, 15) **43.** Խմբավորել բարդ յեվ ածանցավոր  
բառերը. բարդ բառերը բաժանել բաղադրիչ մասերի յեվ  
ընդգծել մասերը, իսկ ածանցավոր բառերը՝ արմատ յեվ  
ածանցի, ընդգծել ածանցները.

## I. ԺԱՄԱՊԱՀԱՅՀ

Փողոցները խաչաձեռղ  
Նորակառույց շենքերի մոտ,  
Կա մի փոքրիկ բացատ փողոց  
Փոշիաշունչ ու արեսոտ:

Այնտեղ ահա, ճամբամիջին,  
Ուր անցնում են կառք ու ձիել,  
Ուր արձանն ե մեծ իլլիչի,  
Կանդած ե մի միլիցիոներ:

Զահել ե նա, ժիր ու զվարթ,  
Ու մոխրագույն շորեր հագին,  
Գլուխ փափուկ մի սաղավարտ,  
Մի փոքրիկ փակտ ունի ձեռքին:

Մերթ ավտո յե անցնում մոտով,  
Մերթ ազմկոտ մի սայլ, կամ կառք,  
Նա իր ձեռքի փոքրիկ փայտով  
Անձայն տալիս ե հրահանդ:

(Պ. Սարյան)

### Որինակ

Թարդ բառեր  
Ժամ—ա—պահ  
Նոր—ա—կառաւց  
և այլն:

Ածանցավոր բառեր  
փող—ոց  
շեն—ք  
և ավնու

II. Խմբագրատանը, ինչպես միշտ, այս անդամ ևս նստած եր մեն-մենակ քարտուղարը՝ չորիկ-մորիկ մի յերիտասարդ պարզ ակնոցով և աջ ձեռքի ձկույթի վրա աճեցրած կես վերջուկաչափ սրածալը յեղունդով, —և արագ զրում եր յերկայն ու նեղ թղթերի վրա, ձկույթը խիստ վորոշակի առանձնացրած հարեան մատներից: Պատրիկյանը, իբրև պարսպ մարդ և իբրև ձրի աշխատակից, խմբագրատան ամենորդա այցելուն եր, այնպես զոր քարտուղարն ու նա, վորոնք մտրիմ ընկերներ եյին, այլևս չելին բարենում իբրար տեսնելիս: Այս անգամ ևս Պատրիկյանը մտավ քարտուղարի սենյակն առանց բարեկու, նստեց զրասեղանի ծայրին, վերցրեց տեղական ոռւս լրագրերից մեկը, վորոնցից քարտուղարը լուրեր եր թարգմանում, և սկսեց կարդալ: Տեղական լուրերից մեկը կարդալուց հետո հարցրեց,  
— Ինչո՞ւ այս լուրերը չես նշանակել:

(Ենարդոս. «Ենդ որերից մեկը»)

III. Դեմ ու դեմ, ալիքաձև բարձրանալով մինչև մշուշալից հորիզոնն եր տարածվում սկ լեռնաշղթան:

Նրա կուտակված տարածությունը վերեկց թագնվում եր մասամբուղի մեջ և ցածի կողմից ճղփում թացությունով: Զյուն ել թվում եր, վոր կար, բայց շատ հետու, ամպի ապիտակ շերտ լինելին կարծես:

Թանձր, սեագույն սպիտակախառն մշուշը ծանրացել եր նուև ձորերի և հովիտների, լեռների և բլուրների շորջը: Տեղ-տեղ շամցաձև, յերկնքից զետին իշնող չեղտակի գծերը ցույց եյին տալիս, վոր իմաստ անձրև նր տեղում զանազան կողմերում:

Յերեսում եր, վոր ամպերը դեռ շատ ջուր ունեյին և այդ գծերը պիտի քալելին: Մշուշի քուլաները թավալվում ելին բլրակներն ի վար, քալիս ցրվում դեպի զաշտերը... և արոտների կանաչ խոտերը, արտերի ցորենի հասկերը կուցրել եյին գլուխները կաթիլների ծանրության տակ:

IV. Ծերունին սկսել եր ավելի հանդարտ քալելի: Նրա հնամաշ տրեխներից ջուրը հոսում եր գուլպաների մեջ, վոաը թըրջում: Առնավությունը թափանցում եր բաց կուրծքը, և վերարկվել վրա մշուշից կաթիլներ եյիր դիզվում:

Անցնելով, մի առ մի դիտում եյի յերկու կողքի արտերը: Շատերի միայն մի քանի ակոսներն ելին ավրվել, և մեջտեղերում լճակներ գոյացել:

Մի քանիսները լիովին վողողվել եյին: Զրի հոսանքներն արմատախիլ եյին արել, քշել-տարել ցորենի դալար ծիլերը և հավաքել ակոսների մեջ:

Ցեխ եր գուացել ամեն մի փոքրիկ շավիղի վրա: ամեն մի փոսի մեջ պղտոր, կարմրագույն ջուր եր կիտվել, և շատ հասկեր լողում եյին նրանց յեղեաների վրա, վորպես խեղվածներ:

(Վ. Փափազյան. «Արտօն»)

### 44. Գրել 10 բարդ յեվ 15 ածանցավոր բառ,

#### Որինակ

Լեռնաշղթա, աշակերտական:

(Տես § 15) 45. Փակագծերում գրված բառերից կազմել բարդ բառեր յեվ գործածել ավալ նախագնուրյան մեջ.

Հիմանդի զեմքով սահեց խորին (յերախտիք, գիտություն) ժողոված... (իրիկուն, գեմ) նորից սկսեց զառանցել .. (վերք, բուլժ) նոր եր փոխել վերքերի սոլեղանին... (կես, որ) զեմ նրան պաշտպանությունը առաջարկությունը... նա չափից գուրա վրդովկեց, յերբ (քուն, հարը) (թուղթ, մոլի), գիտակցարար, թե անլգուշությամբ, հիշեց Գրիշալի անունը... Դուրս գալուց առաջ Միքայելն անցավ (անդամ, լույս) սենյակը, հարցրեց առողջության մասին... (փորձ, առու) բանվորներն աշխատում եյին (նավթ, ամբարներ) աղատել հրեղեն անձրեից... Միքայելն

(ուշ զրություն) չեր գարձնում հրդեհի վրա... (ջուր, մուղ) գործում են ծուլորեն... Քաղաքից շարունակ գալիս ելին (հանք, տերեր), (գործ, արան, տերեր), (գործ, կատար)...

(Շիրվանզագե. «Ցառու»)

(Տիւ § 17) 46. Հետևյալ հապավումները գրել լրիվ բառերով.

Գյուղխորհուրդ, կուսկոմիտե, շրջգործկոմ, կենտրոնակոմ, ժողկոմիխորհ, ՄՏԿ, լուսժողկոմ, բանֆակ, ԼԿՅԵՄ, ՀԽՍՀ, Համկ(ը)կ կկ, կուտանտեսություն, խորհանտեսություն, գյուղթւղթակից, գյուղկոռապ, կուլտարշավ, փող, Փինսաժին, խնայութամրկություն

Որինակ

Գյուղխորհուրդ—գյուղական խորհուրդ

47. Հետևյալ բառերից կազմել բարգ կամ ածանցավոր բառեր.

Հույս, հույս, ուշի, թույլ, ծույլ, բույլ, կույր, ստույգ, կույս, խույժ, խույզ, խույզ, համրույր, անլույս, անհույս, անստույգ, հետախույզ, ընկույզ, բույս, հույզ, աշխույժ, գույն, բույժ, տույժ:

48. Կազմել բարգ յեվ ածանցավոր բառեր.

Ան և յեզր, ան և յերկույզ, ան և յեղակի, վեր և յելք, նոր և յեկ, ան և յեղբայր, ան և յելանելի, ան և ստեղծանելի, ան և յեղունզ, այժ և յեղջուր, ան և յենթակա, ան և յեռանզ, բազում և յեռանզ, ան և յերազ, բազում և յերամ, ան և յերաշխ, սեր և յերգ, պար և յերգ, ան և յերես, բազում և յերես, սե և յերես, կարմիր և յերես, ան և յերեռոյթ, ան և յերեակայիլի, յերթ և յեկ, ապ և յերջանիկ, ան և յերախտիք, ան և յերկայություն, ան և յերկմիտ, ան և յեփել, նոր և յեղբայր:

Որինակ

Բարգ բառեր

Նոր և յեկ—նորեկ

Ածանցավոր բառեր

ան և յեղակի—անեղակի

49. Կազմել նոր բառեր (ածանցավոր կամ բարդ).

Ա. և ըղձալի, չ և ըմբոստանալ, չ և ըմբանել, ան և ըմբոնելի, գյուր և ըմբոնելի, չ և ընդառաջել, չ և ընդարձակել, չ և ընդգրկել, ան և ընդդիմադիր, ան և ընդհատ, չ և ընդմիջել, ան և ընդունակ, վորոտ և ընդուս, ան և ընդունելի, չ և ընթառամ, դյուր և ընթաց, ան և ընթեռնելի, չ և ընթերցված, վերջ և ընթեր, չ և ընծայել դաս և ընկեր, գործ և ընկեր, հուր և ընսկեր, հյուր և ընկար, հյուր և ընկալություն, չ և ընկղմեմ, չ և ընտրել, ան և ընտրելի, ան և ընդմիջաբար, հատ և ընտիրք դաս և ընթաց, նախ և ընթաց, զույգ և ընթաց:

Որինակ

Բարգ բառեր

գյուր և ըմբոնելի—

—դյուրը ըմբոնելի

Ածանցավոր բառեր

ան և ըղձալի—անըղձալի

## ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԽԱՍՏԱՐ ՄԱՍԵՐ

50. Վորուել, թե վո՞ր խօսեի մասին են պատկանում  
ԾԵՂԳԸՆՎԱԾ

I. Գրիգորը սակայն վոչ մի ուշադրություն չդարձեց խեռագարի արդ վարմունքի վրա, համբիչը հանգիստ կերպով զցեց արխալուղի գրավանը, մյուս գրավանից հանեց մետաքսե թաշկինակի մեջ խնաժքով փաթաթված ինչ-վոր մի բան յեվ սկսեց կամաց-կամաց բաց անել:

(Նար-դոս. «Ինչպես բժշկեցին»)

ՈՐԻՆ ԱԿ՝

ԳՐԻԳՈՐԸ ԳՈՐՋԱԿԱՆ

II. ՎՈ՞Ր, քոռանամ յես, աղջի, ծեծումա մաթրախով, ծեծում,

— Ճվայ նսանը յեվ յերեսն ավելի պինդ կպցը ապակուն

— Հա, ելի, հա, ելի աղջի, — ասաց մի ուրիշ կին, վոր նույնպես աչքերը չսած՝ նայում եր պատուհանից ներս. — Վո՞ր, վո՞ր, քո՞ր, ձեռներն ու վոտներն ել կապել ա թոկով... Վո՞ր, վո՞ր, վո՞ր, վո՞ր ա թեփոխն-թեփոխն զալիս, ծեղ մատադ...

(Նար-դոս. «Ինչպես բժշկեցին»)

## ԳՈՅԱԿԱՆ

(Տես § 21) 51. Արտագրել գոյակաները.

I. Յեվ մայրական անուշ ու քնքուշ ձալնի յերաժշտությամբ հանգստացավ մասնկան փոթորկված հողին, ու նրա աչքերը մեղմիկ փակվեցին...

Նա քնեց և ար անդամ նրան պաշարեցին այլ յերազները Յերազներ, միմյանցից ուրախ ու հաճելի. Ծաղկազարդ սարեր ու ըլուրներ, պայծառ յերկինք, զմայլելի յերկիր և յերաժշտություն՝ այնքան զյութիչ ու այնքան կախարդիչ, վոր մանկան եյությունը ձուլվեց նրա հնչունների հետ...

Գիշերային բուերը լուցին, զարհուրելի պատկերները չքացան, ահուելի ուրգականները կորան. Դաղարեց աքաղազների աններդաշնակ կանչը, ուների վշշոցը. Սկսեցին լերգել ասավոտյան թոշունները գավթում գտնվող ծասերի վրա. Յերազը խառնվեց իրականության,

Մայրը զարթնեց, բաց արավ լուսամուտի փեղկերը. Գարնանային արեգակի շողերը վոսկեղոծեցին մանկան յերեսը, և նայեց մայրն ու նրա սիրան սկսեց ուժգին բարախեր. այն ինչ անդորրը ու յերջանիկ ժպիտ եր մանկան դեմքի վրա. Յերբեք, յերբեք նա չեր տեսել այդքան պայծառ, այդքան ուրախ ժպիտ կյանքի ժպիտը:

(Եկրգանզաղե, «Կյանքի ժպիտը»)

ՈՐԻՆ ԱԿ՝

ԳՈՅԱԿԱՆԵՐ

սար, ձայն, յերաժշտություն և այլն,

## ՀԱՏՈՒԿ ՑԵՎ ՀԱՍԱՐԱԿ ԱՆՈՒՆՆԵՐ

(Տես § 21) 52. Խմբավորել հասուկ անուններն առանձին յեվ հասարակ անուններն առանձին.

I. Առ միջանցքով գկպի բակ և գնում վայնկան, բակից արևեստանոց և անցնում ու այնտեղից ել կողքի շենքը, վորի փոքրիկ գուն վրա մեծատառերով գրված են

## ԼԿՑԵՄ ԲՁԻՉ

բառերը:

Վայնկան տասներեք տարեկան ե, իսկ կանոնազրությամբ տասնչորս ե պահանջվում: Հենց այդպես ել գրված ե, միության անդամ կարող ել լինել ամեն մի անչափահաս բանվոր ոկտած տասնչորս տարեկան հասակից:

Իսկ այժմ կարելի յե խորհրդակցական ձայնի իրավունքով  
ընդունել: Այս, ինչպես չի սիրում խորհրդակցական ձայն ունե-  
նալ—խիստ վիրավորական ե, Գրիշան չե՞ վոր վճռական ձայն  
ունեցող անդամ ե, մինչդեռ միևնույն դասարանում և միևնույն  
արհեստանոցումն են... Ֆեղկան, Սենկան, Վասկան, Ստենկան,  
նույնպես և Վայնկա Լորոզը—ինչպէս են լավ իրենից:

Վողջ դժբախտությունը ատասներեքի մեջ ե:

Յեվ յերբ վոր պատահում ե ժողովում բանաձեռ են հանում  
և ձեռքերի անտառ ե բարձրանում գրտիմների շիկահեր մամուռի  
վրա—ամբողջ սրառվ ուղղում ե, ուղղում ե ձեռքը մյուսների պես  
բարձրացնի, բայց վախենում ե—նրան թվում ե, թե բոլորն ել  
իրեն են նայում և իսկույն պետք ե ասեն, «Վայնկա, մի մո-  
ռանա կանոնադրությունը»:

Յերեկոյան ընդարձակ ակումբում ժամանցի յե հավաքվում  
դործարանը: Մեծերն ընթերցարանում լրագրով են զբաղվում,  
յերիտասարդությունն ել՝ ով ինչով կամենա:

(Մ. Կոլոսով. «Տասներեք տարեկանը»)

### Որինակ

Հատուկ անուններ

Վայնկա

Գրիշա...

Հասարակ անուններ

Միջանցք

Բակ

Արհեստանոց...

II. Մի յերկու որից յետը Համբոն գնում եր իրենց գյուղը:  
Նա թաղել եր Գիքորին ու գնում եր: Կուան տակին տանում  
եր շորերը, վոր մերը լաց լինի վրեն: Շորերի գրպաններում  
մի բուռը փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չթի կառուներ  
ու մի քանի քորոց գտան: Են ել յերեի, քրոջ—Զաննի համար  
եր հավաքել ու պահել...

Դնում եր Համբոն ու մտածում: Շատ ժամանակ չնը անցել,  
վոր եդ միևնույն ճամփով քաղաք յեկալ իր Գիքորի հետ: Ֆիտ  
ալստեղ եր, վոր նա ասավ:

— Ապի, վոտներս ցավում ենս...

Յեվ ահա են ծառը, վորի տակ նստեցին հանգստանալու...  
Ահա ենտեղ եր, վոր ասավ.

— Ապի, ծարավ եմ...

Ահա են աղբյուրն ել, վոր ջուր խմեցին...

Ամենը, ամենը կան, մենակ նա չկա...

Մյուս որը, յերբ Համբոն անցնում եր լեռները՝ հեռվաւմ  
յերեաց իրենց գյուղը:

Դյուղից դուրս կանգնած սպասում եյին նանը, Զանին,  
Միկիչը, Մոսին, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից կանչում եր,

— Ալի, ալի, հե Գիքուլ...

(Հ. Թումանյան. «Դիքուրը»)

III. Այդ ժամանակ արգեն նա պետք ե մի անուն ունենար:  
Հայրս նրա անունը գրավ Փաշա, իբրև գեղեցիկ և վոչ թուրքի  
աղա:

Մեղանում ձիուն անուն չեն դնում: Մեր Փաշան այդ կող-  
մից մի բացառություն եր: Ամեն ձի իր գույնից ե առնում իր  
անունը, Ասում են՝ Մե ձի, Կարմիր ձի, Կապույտ ձի, Խալափոր,  
Սաքուլ, Ղաղզա: Մեր Փաշան նույնպես ղազղա յեր, մի քան  
կոպեկանոցի չափ սպիտակ նշան ուներ ճակատի մեջ տեղը:

(Հ. Աղայան. «Մեր Կարմիր ձին»)

30. Գրել 7 հատուկ յեկ 15 հասարակ անուն:

### ՀՈՂՈՎՆԵՐ

(Տես § 24) 53. Արքագրել յեկ ընդգծել ուղղական հոլվով:  
Գրված գոյականեները.

### I. ԱՇՈՒՆ

Աշունն ել յեկավ, և մեր աշխարհում  
Սարին ու դաշտին այլ կյանք ե յեռում:  
Կեռներից զվարթ, գիրացած հոտեր,  
Զմեռվան համար իշել են դաշտեր,  
Յուրդերը դատարակ ուեին են տալիս,  
Ազբյուր ու ծաղիկ վողբում են, լալիս,  
Մենակ խաղում ե, թռչկոտում պախրան,  
Սարեր ու ձորեր մնացին նրան:

(Վ. Միքայելյան)

Ա. Այսական արդեն անձրից հետզհետե գաղարեց և քամին  
սկսեց յերկնքի վրա կուտակված ամպերը ցըել: Տեղատեղ յերեաց  
և պայծառ կապուտակ յերկինքը: Արևի ճառագայթները ամպերի  
արանքից շեղակի թափանցելով՝ վոսկեղոծեցին լվացված լեռներն  
ու սարերը: Լեռների բարձրությունների վրա հրաշալի ծիածանն  
իր կամարը կապեց:

(Մուրացան. «Փոթորիկն անտառում»)

### III. ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՎԱՐԴԵՐԸ

1

Հաֆիսն ապրում եր մի փոքրիկ տան մեջ, իրանի Շիրազ  
քաղաքում, վոր կոչվում եր իրանի վարդ, վորովհետե, ինչպես  
վոր վարդը բոլոր ծաղիներից զեղեցիկ ե, այնպես ել Շիրազը  
իրանի ամենալավ քաղաքն եր:

Բանաստեղծի բնակարանը շատ փոքր եր՝ ուներ միայն  
յերկու լուսամուտ և մի փոքրիկ դուռ: Սենլակում կային յերկու  
բաղկաթոռ և մի սեղան: Հաֆիսը զարդարանք չեր սիրում: Տան  
արենլան պատի յերկարությամբ վարդի թփեր կային տնկած,  
վորոնք ամբողջ տարին վարդեր եյին տալիս: Հաֆիսը ինքն եր  
խնամում այդ վարդերը, անվանելով նրանց իր միակ ուրախու-  
թյունը և հարստությունը:

(Ա. Խնկոյան)

IV. Գերասիմը շփրունակ թիավարում եր ու թիավարում:  
Ահա Մոսկվան արդեն յետ մնաց: Ահա գետի ափերին տարածվում  
են մարգագետիններ, բանջարանցներ, զաշտեր, պուրակներ, յե-  
րեացին խրճիթներ: Գյուղի հոտ եր գալիս: Գերասիմը թիերը  
ձգեց, զլուխը սեղմեց Մումույին, վոր նստած եր նրա առջե  
չոր տախտակի վրա—հատակը լցված եր ջրով—և այդպես մնաց  
անշարժ ուժեղ բաղուկներով շան մեջքը զրկած: Իսկ նավակը  
մինչ այդ ալիքներով կամաց-կամաց տարվում եր յետ դեպի  
քաղաք:

(Տուրքենեկ. «Մումույ»)

54. Կազմել նախագասուրյուններ յեվ ուղղական  
հոլովով գործածել ինենքիալ գոյականեները.

Դաշ, սար, արեվ, ծաղիկ, աւակեր, վարդ, գարուն, կուսիկ,  
դասարան:

Որինակ՝

Դաշտը ծածկվել ե կանաչով:

(Տես § 25) 55. Արտագրել ո ե ու ականով գրված գոյական-  
ները այն բառերի հետ, վորոնց վերաբերում են նրանք,  
ընդզել սեռականները յեվ փակազծում գնել հացերը.

### I. ՅԵՍ ԱՇՆ ԵՄ ՍԻՐԱՒՄ

Ե՞ն՝ վոր կիսահալ սառուցի տակից  
Ժիր վատակներն են հերհեւ լողում,  
Ե՞ն՝ վոր ձյուների վերջին հալոցքից  
Թավիշ, աղվամազ կանաչն ե շողում,  
Ե՞ն՝ վոր արևի կենսատու շողքից  
Գարնան առաջին ծաղիկն ե ծլում  
Եեվ մանուկի պես արթնացած քնից

Աչքերը ճմլում՝

Ցես այն եմ սիրում:

Ե՞ն՝ վոր նայում ես սարերի լանջին  
Պուտերի խումբն ե կարմրին տալիս,  
Լսում ես ջանել արտերի միջին  
Արտուրի ազատ կանչը թնդալիս,  
Ցեվ այդ հաղթական ցնծալի կանչին  
Տեսնում ես նորեկ ընկեր-թոշուններ  
Արձադանքում են, տալիս վողջույններ

Ազատ յերթերում՝

Ցես այն եմ սիրում:

Ե՞ն՝ վոր այդ սրախիդ գոհունակ ժամին  
Տեսնում ես՝ մեկ ել հյուսիսի կողին  
Շողաց մի փալլակ... լետքից ել խրոխտ  
Հեռու ներդաշնակ մի անուշ վորոտ,  
Ուր հոգիդ նույնպես թնդում ե զգում,

Վոր այդ վորոտից անձրեւ եւ գալու,  
 Ուը մաքրելու ու մեզ ըերելու  
 Յանկալի գարուն՝  
 Հենց այն եմ սիրում:  
 (Հ. Հակոբյան)

Որինակ՝  
 Զյուների (ինչերի) հալոցքից, արելի (ինչի) շողքից...

## II. Ք Ո Զ Ը

Մազում ե մանուկ արել գարնան  
 Կովկաս լեռների ձյունի պատնեշից,  
 Զարթնում են մեկ-մեկ սարերն աննման  
 Ձմռան անվրդով քնի մշուշից.  
 Ահա Լալվարի վիթխարի ուսին  
 Բազմում ե արփին թարմացած ուժով,  
 Սարեր ու ձորեր իրար յերեսին  
 Նայում են, ժամտում ամպի մըշուշով...

Վերջին ձյուներն ել արդեն հալ ընկան,  
 Արտասվեց իսկույն լեռների հսկան,  
 Ամեն մի ձորից աղբյուր և հոսում,  
 Ամեն մի թփից բյուլբյուլ ե խոսում:  
 Յեվ գալար հովիտ, և ժայռի կրծքեր  
 Արձագանք տալով գարուն են հնչում:  
 Ձմռան փարախից հովվական յերգեր  
 Զեփյուռի թևով սարերն են թուշում:  
 Մաղկալից աշխարհ անվերջ ձորերի  
 Բացվում ե, ժամտում կոկոնից զվարի,  
 Փարթամ գեղության վոգին Դուզարքի  
 Շնչում ե գալնան բուլրով անաղարտ:

(Վ. Միքայել)

III. Լեռների տոնն եւ մարդ և անասուն  
 Ուրախ յերգերով դիմում են սարեր,  
 Մոռանալով ձմռան քաշած վայնասուն,  
 Մաղիկ փնջերով անցնում են ձորեր:

Անցնում են արագ քոչ-քոչի միջով.  
 Գարնան արկից փայլում են զենքեր,  
լողում	լողալու	լողալ
շողում...	շողալու...	շողալ...

(Տես §§ 76, 77) Յ. Գրել ընդգծված բայերի վաղակատար լեզ  
հարակատար գերբայները.

Նա յեկավ մրրիկի պես, զզզեց յերկրի զզեստները, մտավ  
քաղաքները, գուաց, վորոտաց, հետո անցավ-զարձալ խուժեց  
ձորերը, խոյացավ բարձրագանդակները, զարկեց լեռնաստանի  
կլուղերին, թափ տվեց լեռնցու ալաշուխների թները.

Դուրս քափեցին ըներից ստորեկլյա ուժերը՝ վոմանք  
զարեւուրած, վոմանք տփորված:

Վոմանք ել սուր մտիկ տալով մրրիկին՝ բնազդորեն կուա-  
հեցին նրա հարազատ շունչը և վողեռորված դուրս յեկան հանգետ  
Դարերը զարբնեցին լեռների վրա և վեր նստեցին:

(Դ. Դմիտրյան. «Ծաշիղը»)

### Որինակ՝

վաղակատար գերբայ	հարակատար գերբայ
դզզեց ... դզզել	դզզած...
խոյացավ ... խոյացել	խոյացած...
թափեցին ... թափել	թափվածու

(Տես §§ 71—79) 4. Աղյուսակում օրված ներկա կազմել  
բայերի գերբայական բորու ձեզերը.

Անուրոշ	Ցնկատար	Ապառնի	Վագակա- տար	Հարակա- տար	Ցէնթր- կազմական	Հզձական
խոսել	խոսաւմ	խոսելու	խոսել	խոսած	խռադ	խոսի

Խոսել, խռադ կարել, մնալ զնալ, կարել զրել սիրել,  
քալել, չփել, տոկալ

Ծերունին սկսել եր ավելի հանդարտ բայերը Նրա հնամաշ  
տրիխներից ջուրը հոսում եր գուլպաների մեջ, չոտը բշում  
Խոնավությունը բափանցում եր բաց կուրծքը:

Անցնելով, մի առ մի զիտում եյի յերկու կոչքի արտերը:

Զրի հոսանքներն արմատախիլ եյին արել, բել տարել  
ցորենի գալար ծիլերը և հավաքել ակոսների մեջ:

(Վ. Փափազյան. «Ալբար»)

(Տես §§ 71—79) 5. Արտազրել յեզ խմբավորել գերբայները.

Ու բարձրանում եր, անհազ բարձրանում:

Ամբողջ անտառն այժմ լուս, դողոջուն, դարձած զեպի  
բարձրացող ծառը, սրաւարսուփ դիտում եր նրա քաշերը, ուրա-  
խանում նրա հաճախ ապարզուն ճիղերի վրա, չարամտորեն  
ժպտում, յերբ նա մի խոշոր ժայռի գեմ եր առնութ, և նենդա-  
միտ, կծու խոսքի նետում, յերբ ծառը պապակված ու հոգնած  
կանդնում եր շունչ տառներու, և կամ յերբ քամին զորեղ տա-  
րութերում եր նրան այստին կողմ, ծառմ, զետնին եր քսում,  
կամ տերեներն ու ճյուղերը միմյանց խասնելով՝ գլխին դիզաց-  
նում...

Փշում եր քամին, ալրում եր արել, անձրեն և հեղեղները  
թրջում եյին նրան, ամպերը գլխին զորոտում, փոթորիկը նրան  
ժայռե-ժայռ խփում, կայծակը նրա շուրջը շանթող զծեր պար-  
զում... և սակայն ծառը համառ, անդրզվելի՝ յելաւմ եր, յել-  
նում և մշտակա, բարձր կատարներէ ձգտում:

Յել յերկար տանջվելուց հետո, կօք ճղակառը, տերեները կորցրած, հոգնած, ուժապառ, խաղալիք քամիների, վորոտում ների տակ, կայծակի շանթերի մեջ, անձրևներով թրջված՝ հասավ բարձր կատարին։ Այժմ նա մշուշը ցած եր թողել ճահիճների մեջ մնացած իր ընկերներին ծածկելու, այժմ նա դեպի արեն եր տարածում իր թերը, բայց այժմ քան յերբեք՝ նա մենակ եր, անընկեր, հեռու գետակից, հեռու ձորակից։

Յել չեր ափսոսում։ Այդուղի, բարձրության վրա հանգըստացած, զմայլվում եր նա հեռավոր հորիզոնով, փայլուն արևի տակ վողողված լեռների կատարներով։ Անձրևը նրան ջուր եր տալիս, լեռան հողը՝ սնունդ։ Այդաեղ նա յերազում եր մի նոր, բարձր կանգնած սերունդ ստեղծել, բռնել կատարը, արևի լուսին մոռ լինել, ամպերի խոնավությունից հեռու կենալ ճահճային աշխարհից միշտ աղասա մնալ։

(Վ. Փափազյան, «Ըմբռոտի մահը»)

### Որինակ

անորոշ գերբայ անկատար գերբայ հարակատար գերբայ

ստեղծել	բարձրանում	մնացած
և ալն	և ալն	և այլն

### ՅԵՂԱՆԱԿԱՅԻՆ ԶԵՎԵՐ

(Տես § 86) 6. Սուրագել ներկա ժամանակով գործածված բայերը յեվ գորուել նրանց բիվը յեվ գեմքը.

Սպասում եւ և Մամլաքյաթը...

Հանկարծ դահլիճը թնդաց։ Ամենքն աղաղակում են, ծափահարում։ Հնչում եւ յերաժշտությունը։

Բեմի վրա յել ինքը, ընկեր Ստալինը, վորի մասին ախքան շատ եւ լսել Մամլաքյաթը և վորին իսկույն ճանաչեց։ Ժպառում եւ ընկեր Ստալինը, գլուխ եւ տալիս, բարեկում ամենքին։

Ծափերն ու աղաղակները հետզհետե դադարում են։ Դահլիճը խաղաղվում եւ Սկսվում են վողջույնները։ Ահա ամբոխն մոռ եւ Գելգինան, նա մեկնում եր թանկագին նվերը՝ կենինի նկարով գորգն ու տառւմ։ «Մեր կանալք ինձ հանձնաբարել են, ընկեր Ստալին, կենինի հաջորդին, քեզ նվիրել այս մետաքսին»

դորգը և ջերմ վողջունել քեզ, վոր մեզ յերջանիկ կլանք տվիր»։ Մամլաքյաթը մտածում ե վոր այժմ ամենահարձար ժամանակն ե, վոր ինքն ել մոտենա ընկեր Ստալինին և նրան հանձննի հետը բերած տաջիկերեն գիրքը, ուր թարգմանված են ընկեր Ստալինի գրվածքները կենինի մասին Բարձրանում և ամբիոն փոքրիկ Մամլաքյաթը և հնչուն ձայնով ասում։

— Քո գիրքը մեզ համար ուղեցույց ե, այդ գրքով մենք սովորում ենք ու աշխատում։

Յեվ յերբ Մամլաքյաթը ընկեր Ստալինին և մեկնում գիրքը, դահլիճը նորից փոթորկում ե։ Նույն ցնծագին աղաղակները, նույն ծափերը, նույն յերաժշտությունը։ Հուզվում ե ընկեր Ստալինը, արագ քայլերով մոտենում և Մամլաքյաթին, կապում ե նրա ձեռքին վոսկե ժամացույց, ապա հայրաբար գուրգուրում ու համբուրում նրան։

Կարմղ եր ավելի յերջանիկ բոպե յերևակայել իր կյանքում Մամլաքյաթը... Զե՞ վոր Մեծ Ստալինն ինքն իր ձեռքով փոքրիկ Մամլաքյաթին ժամացույց նվիրեց։

Նորից ծափեր, նորից «ուռա»-ներ, նորից յերաժշտություն

«Մամլաքյաթ»

### Որինակ

հնչում ե — յեղակի յերրորդ գեմք.

(Տես §§ 80—86) 7. Սուրագրել անցյալ անկատարով գործածված բայերը յեվ ցույց տալ յուրաքանչյուրի գեմքը յեվ բիվը.

I. Զնայելով վոր իմուղին սարի լանջովն եր բարձրանում, այսուամենայնիվ, ծառերը հովանավորում ելին նրան։ Մեծ մասսամբ նա անցնում եր բնական ծառուղիների միջով, վորոնց, յերբեմն, փոխարինում ելին նաև ժայռերի շարքերը իսկ զրանց, յուր հերթում, հովանավորում ելին դարձալ հինավուրց ծառեր, վորոնք բուսած լինելով ժայռերի վերելում, այդտեղից իրենց սաղարթախիտ վոստերը ձգում, տարածում ելին ճանապարհի վրա, վորը համախ անցնում եր և սիդավետ բալձունքներով, ուսկից տեսարանները բացվում ելին ավելի շքեղ ու ընդարձակ։ Սյապիսի գիրքերից յերեռում ելին Սեյդան լեռան անտառապատ լանջերը և նրա մերկ, ծառաղուրկ կատարը, վոր, սակայն, պա-

տած եր բաց կանաչ թափիշով: Նրան հետեւում եյին ուրիշ շատ  
քեաներ, վորոնք գաղաթների բարձրությամբ մեկը մյուսին գե-  
րազանցելով, հորիզոնը դարձնում եյին վաճ ու փառահեղ:

(Մորացան, «Առաջարկ»)

Որինակ՝

բարձրանում եր — յեղակի յերբորդ գեմք...

## II. ՀՄԲՈՍՏԻ ՄԱՀԸ

Անտառը հուզված եր, հուզված մեծապես:  
Խուր զայրազին մի շաբակ գրավել եր նրան:  
Հսկա կաղնիները բուռն շարժումով կունում եյին գեղի  
թացիները, թեղին ու լորին վրդովված՝ շնչում եյին, թփերն  
անդամ, անձունի բաղեղներով գալարված, վոտները, ձահձի մեջ,  
դաշլ հողի վրա պառկած՝ անհանգիստ եյին... Անտառն ամբողջ  
հուզված եր: Անտօվոր մի գեղք եք տեղի ունենում այդ բազ-  
մագարյան ճահճային աշխարհում, ուր ծառերը մինչև այդ աճում  
եյին, մեռնում, գիշության մեջ բորբոսնում, պարազիտներով  
լցվում, բաղեղներով կաշկանդվում, և ուր բոլորը գոհ եյին,  
վոչնչի չեյին ձգտում:

Բայց ահա մի որ ծառերից մի քանիսը պատռել եյին ամեն  
պատռտակ, անցել ամեն ճահճ, և արմատները, փոխանակ,  
ըստ վաղեմի ավանդության, ձորն ի վար իջնելու, սկսել եյին  
լեռն ի վեր պարզել: Այդ անսովոր եր, խիստ անընական, և  
ամբողջ անտառն իզուր չեր հուզվել:

(Վ. Փափազյան)

III. Դրանից հետո յերեք որ ել հսձում եյին դյուզացի-  
ները Նրանք համարլա չեյին հանգստանում, վոչ ուտում եյին,  
վոչ խմում: Գիշեր-ցերեկ դաշտումն եյին անցկացնում, մոռացել  
եյին իրենց մրու խրճիթները, ուր կյանքն այնքան դժվար եր  
ու գաժան: Նրանք կարծեն հարբել եյին աշխատանքից, եյու-  
թալի խոտի առատ բուրմունքից, այդ բոլոր հարստությունից:  
Խոկ չորբորդ որը, կեսորին, դաշտում տարածվեց մի ահարեր  
ճիշ — պինվորները գալիս են: Կարծեն խոտարքը գող ընկալի  
կանալք խոտ շուռ տալը դադարեցրին: գյուզացիները անհան-

գիստ նայում եյին ճանապարհին, վարտեղ շարժվում եր մութ  
պատը:

Ամբողջովին կարմրած, շոգից շնչառպառ, գյուզացիների  
առջև կանգնած եր նահանգապետը:

Նրանք ել չեյին հնձում, այլ լուռ ամբոխ դարձած՝ կտնգ-  
նել, մոայլ կերպով նայում եյին զինվորներին և ճիպոտներ  
բարձած սայլերին, վորոնց շուրջը դես-դեն եյին ընկում վա-  
տիկանները:

(Ի. Տուրգենև. «Գյուզացիների դատը»)

8. Արտագրել յեզ ներկա ժամանակով գործածված բայերը  
փոխել անցյալ անկատարի.

I. Թեե նա ծեր ե, ութսուն տարեկան,  
Բայց նրա նման չկա մի վորսկան.  
Աչքի լույսի պես զես զենք ե սիրում,  
Եերկեֆի ծոցից ել վորս ե բերում.  
Դեռ հեծնում ե նա ձին արագավազ,  
Սկ ամպերի հետ թռչում սար ու ձոր,  
Դիտելով լուսնի սահը նազենազ,  
Հիշելով իր թափած արյունը ծործորէ  
Անցնում ե ձգված անտառի խորքում  
Նեղ ոձագառոյտ ժայռոտ կածանը,  
Վորից հոսում ե առուն, աղմկում,  
Կամ թե գորդում խուլ հրացանը...

(Վ. Միրաքյան. «Լավաբեր վորսը»)

Որինակ՝

Թեե նա ծեր ե, ութսուն տարեկան...

II. Մի խումբ յերեխաներ սովորել եյինք կրծել ու պոկել  
ծերուկի կարթերի վրայից կեսերը: Պապիկը խուլ եր, քարի պես  
մունջ... հավաքվում եյինք գետափ, պահվում թփերի մեջ: Մե-  
զանից մեկն ու մեկն իջնում, ե, ջուրը, կամաց առաջ լողում,  
մոտենում ծայրի կարթին, ատամներով կծում, կտրում ե կեան  
ու լոտ լողում, թփերի մեջ պահվում: Պապը քաշում ե կարթն  
ու զարմանում: «Ելի կծել են անպիտանները»: Ու հայիոյում է  
ապահ ձկներին: Խոկ ձեռք բերած կեռերը փոխում ենք, ծախում,

Իրար պահ տալիս, Յես մի քանի կեռեր եյի ճարել, ուզում եյի  
ելի մեկը ձեռք բերել: Հենց վոր պապիկը կարթը ջուրը գցեց՝  
մոտեցա, բանեցի թելն ու կարթը բերանա առա, մեկ ել պապը  
չքաշի կարթը թափով: Թելը ձգվեց ձեռքումս ու կեռը խրվեց  
վերեկ շրթունքիս մեջ: Յես գոռալ սկսեցի, իսկ ջուրը բերանս  
և լցվում: Պապը քաշում ե կարթը, ուզում ե ձուկը դուրս հա-  
նել, Սարսափելի ցավից ծռմավում եմ, վոտներս իմափահարում.  
Ել չամբերեցի, դուրս յեկա ջրեց ու սկսեցի գոռալ: Պապը վա-  
խեցավ, շշմեց, կարթը ձեռքից ցած ընկավ: Վախից ատամներն  
իրար ե խփում: Ալիք բնչպես չվախենար, ուզում եր ձուկ հա-  
նել, դուրս յեկավ մի տղա: Մեկ ել թողեց ու փախավ, վազում  
և, արելաները վոտներից ընկնում են, ինքը դեռ փախչում ե:  
(Ծոլոխով. «Հերկած խոպան»)

Պ. Սրբագրել յեվ անցյալ անկատար ժամանակով գործածված  
բայերը փոխել ներկայի,

Ե՛ Ինչպես ցույց տվավ փորձը,  
Բալդին գիտեր իր գործը,  
Արի յեր մարդը,  
Վարում եր արտը,  
Պահում եր նա ձին,  
Հասնում եր հնձին,  
Նա քիչ եր քնում,  
Շուտ եր վեր կենում,  
Շուկա յեր գնում,  
Տան պաշար առնում,  
Տանը ջուր կրում,  
Ոջախը վառում,  
Վրան ձու խաշում,  
Խաշում ու կպճում,  
Յերբեք չի վիճում:  
(Ա. Ս. Պուշկին. «Տերտերն ու իր թալքի ծառան»)

Երինակ՝

Բալդին գիտեր իր գործը:

## II. ՀՈՒՆՎԱՐԻ ԻՆՆԵՐ

Ամբոխը հանդարտ առաջ եր հոսում ինչպես ովկիանոսի  
մի մոայլ ալիք, վոր շարժվում ե հենց նոր բարձրացած աշնա-  
նային փոթորկի առաջին հունչից: Մարդկանց դժգույն դեմքերը  
նմանում եյին ալիքների պղտորմուլ կատարներին: Նրանց  
աչքերը փայլում եյին տենդորեն, բայց նայում եյին իրար այն-  
պես, վոր կարծես չեյին հավատում, թե այն, ինչ վոր պիտի  
անեն, աջողություն կունենա, ու զարմանում ելին, թե այդ  
ինչքան մարդ ե հավաքվել:

Ճառախսուների խոսքերը թրթում ելին ողի մեջ ամբոխի  
գլխին, վորպես փոքրիկ, գորշ թռչուններ: Ճառաերի մեջ հնչում  
եր մի ցանկություն՝ գանել մի բարի, կարող ձեռք, վոր ընդու-  
նակ լինի միանգամից կանգնեցնել ներկա ծանր կյանքի ըն-  
թացքը և մի ավելի լայն ու ազատ ճանապարհ բանալ նրա  
համար:

(Մ. Գորկի)

10. Ներկայով գործածված բայերը փոխել ապառնի:

## ԼՈՒՅՍԵՐԸ

Ամեն յերեկո, յերբ խավարը ու քուլաներով սփովում ե  
ձորում, հիդրոկայանի բանվորական շենքերի մոտ պայծառ ու  
զվարթ շարվում են լուսերը: Շարվում են ելեկտրական լուսերն  
ու ժպտում ուրախ ցոլքերով, ասես՝ կանչում են նայողներին  
դեպի ժամանակավոր շենքերը, ուր մինչեւ քնելը լսվում են բան-  
վորների խոսք ու զրոյցը, ծիծաղն ու յերաժշտությունը:

Բայց ահա հետզհետե մարում են ձայները բանվորական  
տներում, ու համատարած լուսության մեջ սկսում ե իշխել գետի  
վշշոցը:

Յերբեմն այդ միալար համերգը խանգարում ե յերկաթուղու  
շոգեկառքի անհանգիստ սուլոցը, վորը կրկնվում եր ձորում ար-  
ձագանքերով ու հետզհետե հանգչում: Յերբեմն ել մի մոլոր քա-  
մու կտօր ե գալիս ձորն ի վեր, թեթև սուլում ե ու՝ պատեպատ  
ընկած՝ ճամբար յե փնտում իր համար:

Իսկ ձորի յեղբերին, հանդիպակ ժայռերի վրա ձգվում են,  
պառկում հակա ստվերները, նայում չարաշուք աչքերով՝ ներքին

լույսերին ու մելամաղձ հոգով ականջ զնում գետի հեն, հեն  
վշոցին:

Գիշերվա այս հանգստյան ժամերին տոննելներում անընդ-  
հատ յեռում ե աշխատանքը: Այնուղիւ, լեռան ներսը, ինչ վոր  
խորհրդավոր մարդիկ, իրենց լարված մկանները միացրած մե-  
քենային, համառըին պատում են ժայռի կուրծքը, ուղի յեն  
բանում ջրի համար:

(Արագե)

Որին ակ'

Եերկա

ապառնի

սփովում ե

սփովելու յե...

11. Արտագրել բայերը յեվ կազմել նրանց սահմանական  
յեղանակի անցյալ ապառնին.

### ԳԱՐՈՒՆԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Ծագում ե մանուկ արել գարնան  
Կովկաս լեռների ձյունի պատճեցից,  
Զարթնում են մեկ-մեկ սարերն աննման  
Չմուսն անվրդով քնի մշուշից.  
Ենա կարվարի վիթխարի ուսին  
Բազմում ե արփին թարմացած ուժով,  
Սարեր ու ծորեր իրար յերեսին  
Նայում են, ժագոտում ամպի մշուշով...  
Վերջին ձյուններն ել արդեն հալ ընկան,  
Արտասվեց իսկույն լեռների հսկան.  
Ամեն մի ծորից աղբուր ե հոսում,  
Ամեն մի թփից բյուլբյուլ ե խոսում.  
Յեվ դալար հովիտ, և՝ ժակոփի կրծքեր,  
Արձագանք տալով, գարունն են հնչում:  
Չմուսն փարախից հովվական յերգեր  
Չեփյուսի թեով սարերն են թոշում:  
Ծաղկալից աշխարհ անվերջ ձորերի  
Բացմում ե, ժագոտում կոկոնից զվարթ,  
Փարթամ գեղության վոդին Գուգարքի

Ճնչում կ գարնան բույրով անաղարտ.  
Ամպերն ել երար համբույրներ տալով,  
Զգում են կայտառ, կալվարը գրկում,  
Առաջին անգամ խիստ վորոտալով,  
Դուգարք աշխարհին վողջուն են յերգում,  
Յեվ հայրենիքում փայլակ-կայծակի  
Գիշերվա զրոշմած գաղտնի համբույրներ  
Յերգում են յերկրին սերը յերկնքի,  
Դողում են սիրուց սարեր ու ձորեր  
Յեվ խորհրդավոր մի թովիչ ձայնով  
Խոսում են նրանք, իրար հետ փարզում,  
Յերգում են, խնդում, հազար բերանով  
Լալվարի վիթխար հասակը գովում:  
(Պ. Միքաղյան)

Որին ակ'

Ճագում ե — ծագելու յեր

(Տես §§ 86) 12. Արտագրել վաղակատար ժամանակով գործած-  
քած բայերը յեվ վորուել նրանց թիվն ու գեմքը.

I. Զաթնանց գերդաստանն անհուշ որերից  
Յեղել ե զյուղում անվանի հարուստ,  
Զավթել ե նա միշտ լավը հողերի,  
Ցորենն ե փտել Զաթնանց ամբարում,  
Աձել ե ժամփի ամպհովանու տակ,  
Վորպես հաստարուն մի ընկուղենի,  
Փոելով գյուղում արմատներն անտառ  
Ծծել ե նրա հյութը վայրենի:  
Ծծել ե արյունն, ուղեղը նրա,  
Ու աճել փարթամ, կանաչել ե միշտ:  
Հետո տարածել մութ գյուղի վրա  
Իր շուքը մոայլ, վորպես հնովանին:  
Իշխել ե գյուղում վորպես տանօտեր,  
Վորպես մի վայրի կառավարություն  
Արորն ու յեղն են նրան սնուցել  
Ցարական զաժան սեժիմի մուժում:

լույսերին ու մելամաղձ հոգով ականջ դնում գետի հին, հին  
վշոցին:

Գիշերվա այս հանգստյան ժամերին տոննելներում անընդ-  
հատ յեռում և աշխատանքը: Այնուեղ, լեռան ներսը, ինչ վոր  
խորհրդավոր մարդիկ, իրենց լարված մկանները միացրած մե-  
քենային, համառորեն պատում են ժայռի կուրծքը, ուղի յեն  
բանում ջրի համար:

(Արտզե)

### Որինակ՝

Եերկա

ապառնի

սփովում ե

սփովելու յե...

Ա. Սրբագրել բայերը յեվ կազմել երանց սահմանական  
յեղանակի անցյալ ապառնին.

### ԳԱՐՈՒՆԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Ծաղում ե մանուկ արել գարնան  
Կովկաս լեռների ձյունի պատճեղից,  
Զարթնում են մեկ-մեկ սարերն աննման  
Զմումն անվրդով քնի մշուշից.  
Ահա կարմարի վիթխարի ուսին  
Բաղմում ե արփին թարմացած ուժով,  
Սարեր ու ձորեր իրար յերեսին  
Նայում են, ժպտում ամպի մշուշով:  
Վերջին ձյուներն ել արդեն հալ ընկան,  
Արտասվեց խսկույն լեռների հական.  
Ամեն մի ձորից աղբուր ե հոսում,  
Ամեն մի թփից բյուլբյուլ ե խոսում.  
Յեվ դաշար հոգիս, և ժաղարի կրծքեր,  
Արձագանք տալով, գարունն են հնչում:  
Զմումն փարախից հովվական յերգեր  
Զեփյուռի թեռվ սարերն են թռչում:  
Ծաղկալից աշխարհ անփերջ ձորերի  
Բացյում ե, ժողում կոկոնից զգարթ,  
Փարթամ գեղության վոգին Գուգարքի

Ծնչում և գարնան բույրով անաղարտ.  
Ամպերն ել իրար համբույրներ տալով,  
Զվում են կայտառ, կալվարը գրկում,  
Առաջին անգամ խիստ վորոտալով,  
Գուգարք աշխարհին վողջուկն են յերդում,  
Յեվ հայրենիքում փայլակ-կալծակի  
Գիշերվա զրոշմած գաղտնի համբույրներ  
Յերգում են յերկրին սերը յերկնքի,  
Դողում են սիրուց սարեր ու ձորերը  
Յեվ խորհրդավոր մի թովիչ ձայնով  
Խոսում են նրանք, իրար հետ փարվում,  
Յերգում են, խնդում, հազար բերանով  
Լալվարի վիթխար հասակը գովում:

(Վ. Միքաղյան)

### Որինակ՝

Ճաղում ե — Ճաղելու յեր:

(Տես §§ 86) 12. Սրբագրել վաղակատար ժամանակով գործած-  
ված բայերը յեվ վորուել երանց թիվն ու դեմքը.

I. Չաթնանց գերդաստանն անհուշ որերից  
Յեղել և զյուղում անվանի հարուստ,  
Զավթել ենա միշտ լավը հողերի,  
Ցողենն ե փտել Չաթնանց ամբարում,  
Աձել ե ժամի ամպհովանու տակ,  
Վորպես հաստարուն մի ընկուղենի,  
Փուելով զյուղում արմատներն անտառ  
Ծծել ե նրա հյութը վայրենի:  
Ծծել ե արյունն, ուղեղը նրա,  
Ու աճել փարթամ, կանաչել ե միշտ:  
Հետո տարածել մութ զյուղի վրա  
Իր շուքը մուայլ, վորպես ռհովանիք:  
Իշխել ե զյուղում վորպես տանուտեր,  
Վորպես մի վայրի կառավարություն:  
Արորն ու յեղն են նրան սնուցել  
Ճարական գաֆան ռեժիմի մուժում:

III. Յեվ կուչ և յեկել թշրիմա գյուղացին  
 Զաթնանց դարավոր ընկուղենու տակ՝  
 Աչքերը հառած ալիցուկ հացին,  
 Իր վողորմելի բախտին անդիտակ՝  
 Ու, յերբ վոր Զաթնանց վողորմած Խաթունը  
 Նրա քրտինքով լցված ամբարից  
 Նրան, աջ ձեռքով, ձախ ձեռքից թագուն,  
 Տվել ե մի բուռ բորբոսած գարի,—  
 Վեցրել ե նա ու հազար բերան  
 Որհնել ե Զաթնանց հարստությունը,  
 Ու վողջ գավառում տարածվել արագ,  
 Զբնացել ե Զաթնանց անունը,  
 Խոկ Զաթնանց Սանթրոսն որհնված բահով  
 Ճեղքել ե զլուխն ալքատ Ռուշանի,  
 Հափշտակել ե ընտիր սեահողն  
 Ու սովի մատնել մի տուն ընտանիք:  
 Մեռել ե Ռուշանն եղ վերքից հետո  
 Ու ման ե յեկել Սանթրոսն անպատճեւ:  
 (Ն. Զարյան)

### Որինակ

Պաղակատար

յեղել ե — յեղակի յերրորդ դեմք

III. Յեղել ե մի մանուկ վեց տարեկան: Ծնողները սիրել  
 են նրան իրենց հոգու ամբողջ ջերմությամբ, շոյել ու փայտա-  
 յել են ու վոչինչ չեն խնայել նրա համար, վոչինչ: Մանուկը  
 յեղել ե յերջանիկ այդ սիրով և պաշտել ե իր ծնողներին ու սի-  
 րել կյանքը:

Յեվ աշխարհն այնքան հաճելի յե յեղել նրա համար, վոր  
 վոչ մի վիշտ, վոչ մի դասնություն չի ընկնել նրա մատաղ հո-  
 գին: Ապրել ե ու աշխատել, աշխատել ե ու ապրել մինչեւ խո-  
 րին ծերություն, միշտ ուրախ, միշտ զվարթ: Նա հավատացել  
 ե կյանքին խորին հավատով և սիրելով կյանքն ու իր զավակ-  
 ներին, արհամարել ե մահը և միշտ հեղնել ու ծաղրել ե նրան,  
 ինչպես առավոտն ե իր պայծառ լուսով ծաղրում գիշերվա խա-  
 վարը: Արեգակը նրա համար ե յերկերը լուսավորել ծառերը

նրա համար են բարձրացել, նունենիները նրա համար են բուսել  
 ու անուշ բուրմունք տարածել, գետերը նրա համար են հոսել,  
 աղբյուրները նրա համար են կարկաչել, թռչունները նրա հա-  
 մար են յերգել, խոկ հուրը, սուրը նրա համար յեղել են խաղա-  
 լիքներ: Ամեն ինչ, ամեն ինչ նրա յերջանկության համար ե  
 յեղել, և յերկերն ու յերկինքը, և ծովերը, և ասողերը, համայն-  
 տիկերքը մարդու համար: Յեվ մարդն յեղել ե հպարտ ու վեճ,  
 ուրախ ու յերջանիկ:

(Ելրվանդաղե, «Կյանքի ժպիտը»)

IV. — «Ավագ-վորսկանի անունն ե մենակ  
 Սարերին հայտնի ամեն մի մարդու,  
 Ավագ-վորսկանի գոչունն ե մենակ  
 Լալվարի գոռող վորոտից ազգու:  
 Մանուկ որերից նա վորք մնալով,  
 Ապրել ե ինչպես սկ ամպը սարին,  
 Որոր ե յերգել քամին սուլելով,  
 Յեվ նա ննջել ե մամոռտած ժայռին,  
 Մթին ձորերի ահավոր կիրճում  
 Սիրել ե թանձր վառողի ամպեր,  
 Ուր փայլակ—կայծակ մահ են շառաչում,  
 Գրկել ե կայտառ ոլաք ու շանթեր,  
 Ընկերն ե յեղել մի հին հրացան,  
 Խոկ անուշ յերգը՝ գնդակի բզզոց...»  
 (Վ. Միրաքյան, «Լալվարի վորոր»)

13. Արտագրել ընդգծված բայերը յեվ վորուել նրանց  
 ժամանակը, թիվը յեվ գեմքը:

Անկողնի վրա մեկնվել եր զունատ և նիկարած թեռու՝  
 խամբած աչքերով: Կինն արտասվալի կծկել-նսել եր կողքին,  
 յերեխաները վերահաս ցրաից, մերկությունից և վշտից քար  
 կտրած՝ մեզ ելին նայում անկյուններից:  
 Ու յերբ խնամում ելինք թշրիմին, ոլատմեց նա իր սարսա-  
 փելի պատմությունը:

Խիլ ելին ձեռքից հողը: Թօղել ելին, վոր մաքրեր, հերկեր,  
 անպետք հողն իր քրտինքով փափկացներ, համառ կամքով ըեր-  
 ըիության հասցներ: Յեվ ապա հանկարծ մի որ վճիռ ելին տվելու

II. Յեղ կուչ և յեղել թշվառ գյուղացին  
 Զաթնանց դարավոր ընկուղենու տակ՝  
 Աչքերը հառած ավելցուկ հացին,  
 Իր գողորմելի բախտին անգիտակ՝  
 Ու, յերբ վոր Զաթնանց վողորմած Խաթունը  
 Նրա քրտինքով լցված ամբարից  
 Նրան, աջ ձեռքով, ձախ ձեռքից թագուն,  
 Տվել և մի բուռ բորբոսնած գարի,—  
 Վերցրել և նա ու հազար բերան  
 Որնել և Զաթնանց հարստությունը,  
 Ու վող գավառում տարածվել արագ,  
 Զընդացել և Զաթնանց անունը:  
 Իսկ Զաթնանց Սանթրոսն որհնված բահով  
 Ճեղքել և գլուխն աղքատ Ռուշանի,  
 Հափշտակել և ընտիր սեահողն  
 Ու սովի մատնել մի տուն ընտանիք:  
 Մեռել և Ռուշանն եղ վերքից հետո  
 Ու ման և յեկել Սանթրոսն անպատճետ:  
 (Ն. Զարյան)

### Որինակ

վաղակատար

յեղել և — յեղակի յերբորդ դեմք

III. Յեղել և մի մանուկ վեց տարեկան: Ծնողները սիրել  
 են նրան իրենց հոգու ամբողջ ջերմությամբ, շոյել ու փալիա-  
 յել են ու վոչինչ չեն խնայել նրա համար, վոչինչ: Մանուկը  
 յեղել և յերջանիկ այդ սիրով և պաշտել և իր ծնողներին ու սի-  
 րել կյանքը:

Յեղ աշխարհն այնքան հաճելի յե յեղել նրա համար, վոր  
 վոչ մի վիշտ, վոչ մի դասնություն չի ընկճել նրա մատաղ հո-  
 գին: Ապրել և ու աշխատել, աշխատել և ու ապրել մինչև խո-  
 րին ծերություն, միշտ ուրախ, միշտ դվարթ: Նա հավատացել  
 և կյանքին խորին հավատով և սիրելով կյանքն ու իր գավակ-  
 ներին, արհամարհել և մահը և միշտ հեղեղ ու ծաղրել և նրան,  
 ինչպես առավոտն և իր պայծառ լուսով ծաղրում դիշերվա խա-  
 վարը: Արեգակը նրա համար և յերկերը լուսավորել ծառերը

նրա համար են բարձրացել, նոնենիները նրա համար են բուսել  
 ու անուշ բուրմունք տարածել, գետերը նրա համար են հոսել,  
 աղբյուրները նրա համար են կարկաչել թոչունները նրա հա-  
 մար են յերգել խոկ հուրը, սուրը նրա համար յեղել են խաղա-  
 լիքներ: Ամեն ինչ, ամեն ինչ նրա յերջանկության համար ե  
 յեղել և յերկիրն ու յերկինքը, և ծովերը, և աստղերը, համայն  
 տիեզերքը մարդու համար: Յեղ մարդն յեղել և հպարտ ու վիճ,  
 ուրախ ու յերջանիկ:

(Շիրվանդաղե, «Կյանքի ժպիտը»)

IV. — «Ավագ-վորսկանի անունն և մենակ  
 Սարերին հայտնի ամեն մի մարդու,  
 Ավագ-վորսկանի գոչունն և մենակ  
 Լալվարի գոռող վորոտից աղդու,  
 Մանուկ որերից նա վորք մնալով,  
 Ապրել և ինչպես սև ամպը սարին,  
 Որոք և յերգել քամին սուլելով,  
 Յեղ նա ննջել և մամոստած ժայռին,  
 Մթին ձորերի հանգոր կիրճում  
 Սիրել և թանձր վառողի ամպեր,  
 Ուր փայլակ—կայծակ մահ են շառաչում,  
 Գրկել և կայտառ ոլաք ու շանթեր,  
 Ընկերն և յեղել մի հին հրացան,  
 Իսկ անուշ յերգը՝ գնդակի բզրոց...  
 (Պ. Միրաքլան. «Ապրերի վարը»)

13. Արտագրել ընդգծված բայերը յեղ վորուել երանց  
 ժամանակը, քիվը յեղ գեմբը.

Անկողնի վրա մեկնալել եր զունատ և նիհարած թեսուը  
 խամրած աչքերով: Կինն արտասվալի՝ կծկվել-նսել եր կողքին.  
 յերեխաները վերահաս ցրակց, մերկությունից և վշտից քար  
 կտրած՝ մեղ ելին նայում անկյուններից:

Ու յերբ խնամում ելինք թշվառին, ոլատմեց նա իր սարսա-  
 փելի պատմությունը:

Խիլ ելին ձեռքից հողը: Թողել ելին, վոր մաքրեր, ճերկեր,  
 անպետք հողն իր քրտինքով փափկացներ, համառ կամքով բեր-  
 րիության հասցներ: Յեղ ապա հանկարծ մի որ վճիռ ելին սվել,

անտառի պահապաններին ուղարկել, վորոնք ծեծել ելին նրան և  
հողից դուրս չպատճեն:

Հազի աշխատայուրը կարծեց եւ, թէ քրախնքն ու աշխատու-  
թյունը նույնքան արժեք ունեցին հողի արդյօնքն ստանալու  
համար, վարքան բանի ուժը, Սակայն նրան շատ ազդու կերպով  
հոսկացել ելին, վոր գետ չեն յեկել այդ որերը, և վոր հողի տերը  
նա յե, ով ուժ ունի, ով ունի կոպիտ ու գաղանային բունցքը  
(Վ. Փափազյան. «Հողի աշխատավորը»)

### Որինակ

Նստել եր — վաղակատար անցյալ,  
յեղակի, յերրորդ գեմք

(Տես § 86) Ա4. Արտապրել յեզ ընդգծել հարակատար  
Ժամանակով գործածված բայերը.

### I. Բիրթորիկ

Անտառապահի խրձիթը բաղկացած եր մի սենյակից՝ մրու-  
տած, ցածրիկ ու դատարկ, Մի պատուաված մուշտակ/կախված  
եր պատից, Նոտարանի վրա ընկած եր միփողանի հրայան, ան-  
կյունում թափված ելին փալաները Սեղանի վրա վառվում եր  
մարխը, վորի լուլաը մերթ բարձրանում եր, մերթ իջնում հանգ-  
չելու շափ, Սենյակի ուղիղ մեջանդը կախված եր յերեխայի ճո-  
ճը, վոր կապված եր մի յերկար ձողի ծայրին: Փոքրիկ աղջիկը  
լապտերը հանգցը եց, նստեց մի փոքրիկ աթոռի և սկսեց աջ  
ձեռով ճոճն որորել ձախով մարխը շտկել: Նայեցի շուրջու, —  
սիրառ ճմլվեց. տիսուր բան ե գիշերը գյուղացու խրձիթ մտնելը,

(Տուրդինել)

II. Մի ընդարձակ ամայի բակում յետին կողմը կանգնած  
եր զբոքապան Յագորի հնարյա տնակը, բաղկացած ընդամենը  
մի մեծ սենյակից, վորի դուռը բացվում եր ուղղակի գեղի բակը:  
Տնակի մի կողքից կամած եր տախտակամած խոհանոցը, իսկ խո-  
հանոցի կողքին մի ընդարձակ ծածկոց, վորի տակ Յագորը գի-  
շերները կապում եր իր ծանրաշարժ գրողի աժդանա ձին: Բակը  
փողոցից բաժանվում եր տախտակե ցանկապատով, վորի տակ  
մի անկյունում կիսված եր ձիու ամիսներով հավաքված աղբը:  
(Նար. Դոս. Թու. Յնչ յեղագ հետո...)

III. Մահամերձի մահակալը զրված եր պատի տակ, լու-  
սամտի առջև: Մի կողմում կանգնած եր մեռնողի կինն աղջկա  
հետ, մյուս կողմում՝ վորդիները: Ինքը մահամերձը նստած եր  
անկողնու մեջ, հենված փափուկ բարձերին, ծնկները մետաքսե  
վերմակով ծածկած, ուսերն ու կուրծքը կիսով չափ մերկ, զլուխն  
անզոր վար թեքած: Բժիշկը նորից նրա կաշվի տակ մեջքի կող-  
մից սրսկում եր ինչ վոր սթափեցուցիչ հեղուկ: Անհրաժեշտ եր  
մի քանի բոսկ ևս պահպանել կյանքը հյուծված ու քայլակած  
անոթի մեջ:

(Ելրգանգաղե. «Քառո»)

(Տես §§ 71—87) 15. Գորուել ընդգծված բայերի ժամանակը,  
գեմբը, բիգը յեզ խոնահումը.

### Յերկու լնկերներ

Յերկու ընկերներ իրիկնապահին  
հրացան առած՝ անտառ զնացին,  
վոր մեկ բան վորսան,  
շուտով յետ դառնան:  
Հանկարծ անտառից մի արջ դուրս ողբճակ  
ու կատաղությամբ նրանց վրա վազեց.  
մեկն շտապելով ծառը բարձրացավ,  
մյուսն անճարացած՝ գետնի վրա պառկեց,  
շունչն իրեն հածեց  
ու անշարժ մնաց,  
վոր արջը կարծե,  
թե նա մեռուծ ե:

Արջը մոռարով՝ մոտեցավ նրան,  
ականջը կամաց դրավ բերնի վրան,  
ականջ դրեց,  
վերջապես նրան մեռած կարծելով,  
հեռացավ զնաց՝ գունչը լիզերով:  
Փախած ընկերը ծառիցն իջավ ցած,  
ընկերին հարցրեց, թէ արջն ինչ առաց  
— Արջն ինձ պատվիրեց, վոր յես  
մյուս անդամ

քեզ պես մարդու հետ վորսի չդնամ,  
վոր մեզ մի վտանգ-բան պատահելիս՝  
մենակ չթողնես ու ինքդ փախչիս:

### Որինակ՝

գնացին — անցյալ կատարյալ, հոգնակի,  
յերրորդ դեմք, ա խոնարհման,

**16.** Սրբագրել ընդգծված բայերը յեվ կազմել երանց անցյալ  
կատարյալ առաջին գետը.

### ԶՄԱՆՑՔԻ ԲԱՅԱԿԱՐ

Յնձում ե հովիսը:

Այսոր հաղթության տոն ե:

Վոսկեծորի բոլոր գյուղերից, քաղաքից, ամեն կողմից եշե-  
րով, ձիերով, ջորիներով գալիս են ու դալիս:  
Բոլորն տապում են դեպի թումայի ձորը:

Ամեն մեկն աշխատում է մոտ կանգնել դրոշակներով զար-  
դարված պատվանդանին, վորի վրա ծաղիկների մեջ դրված ե  
լենինի կիսանդրին: Չլում ե զուռնան, դրմբում ե թմբուկը և  
արձագաներում ե ձորը:

Մի տեղ յայլի յեն բռնել: մի ուրիշ սեղ տղապատել են  
գոտեմարտողներին, վոմանք ոջախ են արել, ծուխը բարձրա-  
նում ե, կաթսաների մեջ խլիքլում ե խաշլաման:

Սա հաղթության տոն ե:

Հաղթական կամարը զարդարված է ծաղիկներով ու դալար  
ճյուղերով:

Ողը թնդում է հարյուրավոր մարդկանց գոռում-գոչումով:  
Տարիներով չոր ու ցամաք ձորն այսոր պետք է հեղեղվի և ցա-  
ծումն ընկած հսկայական, ծաքճաքած հողը պիտի ծծի կեն-  
սատու հեղուկը:

Հանկարծ հեռվում լավեց մի խուլ ազմուկ: Չորի գլխին  
յերեացին մի քանի հոգի: Նրանք ձորն եյին իջնում, և նրանց  
առաջանալու հետ միասին ուժեղանում եյին ուրախության ա-  
զաղակները: Ահա և բանվորները միացան իջնող խմբին. ելի  
միացան, ու խուռն բազմությունը ձեռների վրա բերեց ճարտա-  
րապետ Դամբարյանին ու վարպետ Ռուսին: Ներքեւում իրար

անցան, ծովի պես որորվեց ամբոխը և գրոհ տվեց գեղի ձորը:  
Թնդացին շրջակա լեռները:

(Մ. Մանվելյան)

### Որինակ՝

Շտապում են — շտապեցի:

(Տես §§ 85—87) **17.** Սրբագրել ընդգծված բայերը յեվ ըստ  
աղյուսակում ցուց տված ժամանակների կազմել նրանցից  
յուրաքանչյուրի մյուս ժամանակները.

Ներկա	Անցյալ անկատար	Վաղա- կատար	Անցյալ վաղակատար	Անցյալ կատարյալ	Ապառնի
կազմում են	կազմում եյին	կազմել են	կազմել եյին	կազմեցին յեն	կազմելու

Յեկեղեցուց գուրս գալուն պես Սաքուլը պառկեց անկող-  
նում: Մայրը բողեց նրան և գնաց հարսին ոգնելու, վոր սե-  
նյակը կարգի դնեն: Սենյակը խոնավ և աղտոտ եր:

Այդ և հետեւյալ որը գիշեր-ցերեկ Սաքուլը պառկած եր  
անկողնում յեկեղեցու պատի տակ: Դիշերները նրա մոտ նըս-  
տած հսկում եր ժայրը համարյա անքուն: Բարեբախտաբար այդ  
յերկու որը յեղանակը լավ եր, և Սաքուլը բավական լավ եր  
զգում իրեն:

Յերբորդ որն առավոտյան մատաղը մորեցին: Ամենալավ  
կտորները և մորթին տարան վանահայրը, տիրտերները, տիրա-  
ցուն և ժամկոչը, մասցածի շատը բաժանեցին հարևան ուխտա-  
վորներին, իսկ մասնուրը տարան գյուղի բոկոտն չերեխաները,  
և կանայք, վոր հավաքվել եյին հաղար ու մի տեսակ ամաններ  
ձեռքներնին:

(Նար-Դու, «Սաքուն ուխտ զնաց»)

(Տես § 88) **18.** Սրբագրել յեվ ընդգծել հրամայական յեղա-  
նակով գործածված բայերը.

**II.** Արի, պոետ, բարի պոետ,  
յերգի հյուսիր մեր ցավից,  
ընկերացիր մեր սրտի հետ-  
թեթևանանք հոգսերից:

Քեզ պես մարդու հետ վորսի չդնամ,  
վոր մեզ մի վտանգ-բան պատահելիս  
մենակ չթողնես ու ինքդ փախչիս:

### Որինակ՝

գնացին — անցյալ կատարյալ, հոգնակի,  
յերրորդ գեմք, ա խոնարհման.

**16. Սրբագրել ընդգծված բայերը յեվ կազմել նրանց անցյալ  
կատարյալ առաջին գեմքը.**

### ԶԲԱՆՑՔԻ ԲԱՅՈՒՄԸ

Յնձում ե հովիտը:

Այսոր հաղթության տոն ե:

Վոսկեծորի բոլոր գլուղերից, քաղաքից, ամեն կողմից եշեա-  
լով, ձիերով, ջորիներով գալիս են ու գալիս:  
Բոլորն ըստալում են դեպի Թումայի ձորը:

Ամեն մեկն աշխատում ե մոտ կանգնել դրոշակներով զար-  
դարված պատվանդանին, զորի վրա ծաղիկների մեջ դրված ե  
լենինի կիսանդրին: Զլում ե զուռնան, դրմբում ե թմբուկը և  
արձագաներում ե ձորը:

Մի տեղ յայլի յեն բռնել. մի ուրիշ պեղ օրջապատել են  
գոտիմարտողներին, վոմանք ոջախ են արեկ. ծուխը բարձրա-  
նում ե, կաթսաների մեջ խլիքսլում ե խաշլաման:

Սա հաղթության տոն ե:

Հաղթական կամարը զարդարված ե ծաղիկներով ու դալար  
ճյուղերով:

Ողը թնդում ե հարյուրավոր մարդկանց գոռում-գոչումով:  
Տարիներով չոր ու ցամաք ձորն այսոր պետք ե հեղեղի և ցա-  
ծումն ընկած հսկայական, ծաքճաքած հողը պիտի ծծի կեն-  
սառու հեղուկը:

Հանկարծ հեռվում լսվեց մի խուլ աղմուկ: Զորի գլխին  
յերեացին մի քանի հոգի: Նրանք ձորն եյին իջնում, և նրանց  
առաջանալու հետ միասին ուժեղանում ելին ուրախության ա-  
զագակները: Անա և բանվորները միացան իջնող խմբին. ելի  
միացան, ու խուռն բազմությունը ձեռների վրա բերեց ճարտա-  
բապետ Դամբարյանին ու վարպետ Ռհանին: Ներքենում իբր

անցան. ծովի պես որորվեց ամբոխը և գրոհ տվեց գեղի ձորը  
Թնդացին շրջակա լեռները:

(Մ. Մանվելյան)

### Որինակ՝

Շտապում են — շտապեցի:

(Տես §§ 85—87) 17. Սրբագրել ընդգծված բայերը յեվ ըստ  
աղբուսակում ցուց տված ժամանակների կազմել նրանցից  
յուրաքանչյուրի մյուս ժամանակները.

Ներկա	Անցյալ անկատար	Վաղա- կատար	Անցյալ վաղակատար	Անցյալ կատարյալ	Աղառնի
կազմում են	կազմում եյին	կազմել են	կազմել եյին	կազմեցին յին	կազմելու յին

Յեկեղեցուց դուրս գալուն պես Սաքուլը պառեկեց անկող-  
նում: Մալրը քողեց նրան և գնաց հարսին ոգնելու, վոր սե-  
նյակը կարգի դնեն: Սենյակը խոնավ և աղտոտ եր:

Այդ և հետեւյալ որը գիշեր-ցերեկ Սաքուլը պառկած եր  
անկողնում յեկեղեցու պատի տակ: Դիշերները նրա մոտ նըս-  
տած հսկում եր ժայրը համարյա անգուն: Բարեբախտաբար այդ  
յերկու որը յեղանակը լավ եր, և Սաքուլը բավական լավ եր  
զգում իրեն:

Եկերսորդ որն առավոտյան մատաղը մորեցին: Ամենալավ  
կառուները և մորթին տարան վանահայրը, տիրտերները, տիրա-  
ցուն և ժամկոչը, մնացածի շատը բաժանեցին հարսկան ուխտա-  
վորներին, իսկ մսաշուրը տարան գյուղի բոկոտն յերեխաները,  
և կանայք, վոր հավաքվել եյին հաղար ու մի տեսակ ամաններ  
ձեռքներնին:

(Նար-Դոս. «Սաքուն ուխտ զնաց»)

(Տես § 88) 18. Սրբագրել յեվ ընդգծել իրամայական յեղա-  
բակով գործածված բայերը.

II. Արի, պոետ, բարի պոետ,  
յերգի հյուսիք մեր ցավից,  
ընկերացիք մեր որտի հետ-  
թեթևանանք հոգսերից:

Յերգիր դու մեղ բուռն ցայտամամբ  
սրտի բողոքն անմեղի,  
նշանակիր անզուսպ ցասմամբ  
բոնությունը ուժեղի:

(Հ. Հակոբյան)

(Տես § 89) 19. Արտագրել իրամայական յեվ ըղնական յեղա-  
նակի բայերը, փորուն ժամանակը, գլուխ յեվ թիվը.

### ՅԵԿ ԳԱՐՆԱՆ ԱՆՁՐԵՎ

ՅԵԿ, գարնան անձրե, թափվիր, հորդառատ  
ծրացած յերկրի սառ կըրծքի վըրա.  
ԹՌԱ նորից լերկերն շունչ քաշե աղատ,  
ԹՌԱ նըրա կըծքին ջերմ կյանքը յեռա:  
Յերկար նա տանջվեց դառնաշւնչ ձմռան  
ծուրտ կապանքներում քեղ սպասելով.  
Նա շատ համբերեց... կենսատու գարնան  
Քաղցը կարուտը ջերմ փայփայելով:  
Թափվիր այ անձրե, ինչպես մարդարիտ,  
ինչպես լերկնառաք ցողը կենսաբեր,  
վառոգիր գաշտեր, անտառ ու հովիտ,  
Կանաչով պատիր լեռներ ու ձորեր:

ԹՌԱ հորդանալով աղբյուր ու գետակ  
Սասց շղթաներ անահ խորապեան.  
Դուրս գան ափերից, վազեն համարձակ,  
Աղատ խոխոջան, աղատ կարկաչեն:  
ՅԵԿ, գարնան անձրե, թափվիր հորդառատ  
ծրացած յերկրի սառ կըրծքի վըրա.  
ԹՌԱ նորից յերկեր շունչ քաշե աղատ,  
ԹՌԱ նըրա կըծքին ջերմ կյանքը յեռա:

(Ա. Մատուրյան)

### ՈՐԻՆԱԿ

ըղնական յեղանակ

քաշե — ապառնի, յեղակի, յերորդ դեմք

20. Արտագրել բայերը յեվ կազմել երանց բղնական յ դանակի  
ապառնի անցալիք հոգնակի յերկուու գեմքը.

ՎՐՋԵԱՐԻ ԿԻԹԸ

Արել չելած՝ սարվորն արթնացավ,  
Նորից ձորերում աղմուկ բարձրացավ,  
Նորից սացի տակ ճոռում և ճամպան,  
Փռփում հարսի քողն ու դաթիպան:  
Դալար լուրդերը ամպերի տակին  
Աչքերը ձգած քոչվորի ճամպին՝  
Ժպտալով հակինթ ցողերով առատ,  
Կանչում են կարծես բույրով անարատ:  
... Կեսոր և արգեն, կանաչ լարվարից  
Իջնում և հանգիստ վոչխարը կթի.  
Կթվելով մաս-մաս, անյնում և բերից,  
Լովում և անուշ փշոցը կաթի:  
... Վերջացավ արգեն վոչխարի կիթը,  
Կաթսաներ ատրան թարմ կաթնով լիքը.  
Մեկն ել գտակը շարժելով ողում,  
Դեռ գառնաբածին՝ «յԵԿ, հեջ և կանչում:  
Յերկար չանցնելով, սարի գագաթին  
Գառների կայտառ հոտը յերեաց,  
Խառնվելով նրանք մայրենի հոտին,  
Բերկբանքի հուզզով մայում են ցրված.  
Կանչում են, բայում գառըն ու մաքին,  
Անուշ ձայներով փնտուում են միմյանց.  
Վարը գտնելով իրա գառնուկին,  
Ծծել և տալիս, փայելով սրտանց.  
Վորը խաղում և մոր հետ կուշտ փորով,  
Վորն ել մնում և տխուր մայելով:

(Վ. Միքայելյան)

### ՈՐԻՆԱԿ

արթնացավ — արթնանալիք  
իջնում և — իջնելիք

21. Սրբագրել բայերը յեվ կազմել Երանց ըղձական յեղանակի անցյալ ապառնիի հոգնակի յերրորդ գևմբը.

### ԹՇՆԱՄԻՒՆԵՐԸ

Կախվը վերջացավ։ Դաշտում ընկած ելին սպանվածների կույտեր, մարդկանց և ձիերի դիակներ։ Այդ կույտերի միջից լսվում ելին վիրավորների հառաջանքները։

Մի չորացած առվի յեղերքին պառկած ելին յերկու զինավոր, յերկուան ել ծանր վիրավոր։

Նրանց զգեստները տարբեր ելին։ Մի քանի ժամ առաջ դեռ կատաղի թշնամիներ ելին։

Այժմ լուր նայում ելին իրար և ուզում ելին խոսել։ Բայց իրար լեզու չելին հասկանում։ Հանկարծ ավելի յերիտասարդը սողեսող մոտեցավ «թշնամուն» և մեկնեց նրան իր ջրի սրվակը։ Հետո յել աշխատում եր թաշկինակով կտրել նրա վերքից հոսող արյունը, Բայց վոչինչ գուրս չեկավ, միայն ինքն ավելի թուշավ, պառկեց, քուն մտավ։

Վրա հասավ պարզկա գիշերը։ Ցուրտ քամին փչում եր հեռավոր լեռներից։

Կես գիշերին տարիքավոր զինվորը կրկին մի փորձ արագ նստելու, բայց իզուր, արդեն բոլորսվին արյունաքամ եր յեղել։

Աչքը ցցեց իր հարեանի վրա Յերիտասարդ զինվորը քնած եր և կուչ եր յեկել գիշերվա կտրող ցրտից։

— Պիտի սառչի, — անցավ հասակավորի մտքով. — անպատճառ պիտի սառչի խեղճը. ինչքան ել յերիտասարդ եւ,

Յերբ արշալույսի գեմ վիրավորներին հավաքող խումբը մոռեցավ նրանց, յերիտասարդը դարթնեց, ուղեց բարձրանալ ու դարձացավ, վոր իր վրա մի վերարկու կար ցցած։

Նայեց շուրջը, նայեց հարեանին։ Հարեանը մեռած եր և պառկած առանց վերաբկի. նրա վերարկուն եր իր վրա,

(Վ. Գառշեն)

### Որինակ՝

վերջացավ — վերջանային  
ընկած ելին — ընկնելին

(Տես § 89) 22. Վորուել բայերի յեղանակը, ժամանակը, թիվը յեվ զեմբը.

Լինեյի չորան՝ սարերում հեռու,  
գայեր անցնելիր վրանիս մոտով,  
իրար նայելինք անուշ կարոտով,  
քնքույշ ժպտայինք հանկարծ իրարուտ  
Գնայիր աղբյուր ու յետ դառնայիր  
թեթև, վորպես վիթ յելնելիր ձորից,  
մի ջուր տայիր ինձ քո լի սափորից  
ու վրանիս մոտ հանգստանայիր։

(Վ. Տեղյան)

### Որինակ՝

Մինելի — ըղձական յեղանակ, անցյալ ապառնի,  
յեղակի առաջին դեմք.

(Տես § 90) 23. Սրբագրել յեվ ընդգծել պայմանական յեղանակով գործածված բայերը.

Եեվ ծեղը ինձ համբուրելով ձեն կտա.  
Կուրծքս միքը թարմ բուրմունքով կթնդա,  
Ու կարկաչուն աղբյուրների ցողերով  
Կլըվացվիմ և կճախրեմ նոր ճամբով։

Կերթամ հեռու անսապատճեր ու ծովեր,  
Կթափառեմ անհայտ վալրեր, աշխարհներ՝  
Ուրիշ ազգեր, ուրիշ սրտեր տեսնելու,  
Եեվ ամենը հասկանալու, յերգելու։

Եեվ բնության հրաշքները կտեսնեմ,  
Նրա լեզուն, հազար տեսակ, կլսեմ.  
Ուրիշ յերկինք, ուրիշ աստղեր գրկելու,  
Եեվ ամենը խորն զգալու, յերգելու...

(Ա. Իս. «Նորից յեկան գալնան անուշ որերը»)

(Տես §§ 90 և 86) 24. Սրտագրել պայմանական յեղանակի  
բայերը, զուծածել սահմանական ապառնիով, իսկ  
մյուսները՝ պայմանական յեղանակով.

Կանգնում ե Ակորը ճամբին, շունչ առնում, նայում ներքեւ  
լուսաշխարհին, մտածում ե, ահա կանցնի մի յերկու տարի,  
հիգրոկայանը կյանք կտա նոր գործարաններին, իսկ այնտեղ,  
ձորի լանջին, ժայռի վրա կրածրանա լենինի հակա արձանը և  
լույսերով վրադիմած աշքերը կդարձնի գեղի հառուները...

Ու այդ ժամանակ Ակորը, նայելով այդ բոլորին, կղզա,  
փոր ծանր աշխատանքի որերից միայն մի մեծ, քաղցր հիշողուա  
թյուն և մնացել մեջը...

(Արագի. «Լույսեր»)

(Տես § 90) 25. Սրտագրել պայմանական յեղանակի բայերը  
յեզ վորուել եւանց ժամանակը, թիվը յեզ գեմբը.

I. Կաճի յերկիրը քեղ հետ, կմեծանաս զու,  
ժամանակը կարծաթի մաղերդ մի որ,  
Յեզ խնդությունը կյանքի քո պայծառ հողում,  
Վոսկի մի յերգ կդառնա զոսկի որոր:

Որորոցում կնիրհի մի լուսե մանուկ,  
Կկախիլի քո հայացքը նրա սնարին,  
Կշնջան շուրթերդ մի պայծառ անուն,  
Ու մեղմ մի յերդ կհնչի մի նոր քնարից:

Ու մեղմ մի յերդ կհնչի մի նոր քնարից,  
Որորոցում կնիրհի մանուկը լուսե,  
Իսկ մենք կժպտանք նրան ամեն մի քարից,  
Յեզ սյուների վրայից փորպես վառ լույսեր:

(Պ. Մարյան. «Եկերդ ապեղարձեա»)

Որի նակ

պայմանական յեղանակ

Կաճի — ապառնի, յեղակի, լեռորդ դեմք

II. «Ազատ լեռների ազատ զավակներ,  
Մենք քեզ բերել ենք անթիվ գոհարներ.  
Յերկնքի գոտեր — վարդի լեռնասուն  
Կցողենք կուրծքիով անուշնոտություն:  
«Մենք յերանավետ քնքուշ նվազով  
Կըկոչենք խորքից ձկներն իերամով  
Յեզ վոսկեղոծված գարնան արևից  
Քիզ մեր վարթ պարին կանենք խնդակից,  
«Յեզ քո ականջին միշտ սիրո յերգեր  
Մենք արշալուսից կասենք մինչ աստղեր,  
Յեզ քեզ կըփարենք և քո ծեր կուրծքին  
Մենք հանգչել կըտանք մեր քաղցր կրքին...»:  
(Հ. Հովհաննիսյան. «Ժայռը»)

### III. ԱՐԵՎԱԾԱԿ

Յես կանգնած եմ վայրի ժայռի կատարին,  
Բարձր, բարձր, — հեռավոր ու մենավոր.  
Այնակաղ, ցածում, զեռ նիրհում են՝ դաշտ ու ձոր,  
Դեռ խավար և այնտեղ՝ դաժան ու լոին:  
Սակայն շուտով կատարներից հեռանիստ  
Արեն այնաեղ հուը կթափե և վոսկի,  
Յեզ կցնծան դաշտերը՝ լուս ու հանգիստ,  
Եկրկիրն անհուն կարու կյանքի և խոսքի:  
Յեզ զու կերգես, զարթնած աշխարհ, իմ առաջ,  
Կարձագանքես իմ վողջույնին սիրառատ,  
Կըլսեմ յես գարձյալ աղմուկ ու շառաչ  
Ու կափեմ հեքիաթային ասորյատ:  
Լություն ե, մութ և այնտեղ սակայն իմ  
Սրառու արդեն արշալույս ե՝ հարություն:—  
Վողջույն ձեղ մութ ուղիներում յերկնային,  
իմ յեղբայրներ, հեռուներում և բանտում...»  
(Վ. Տերյան)

(Տես §§ 89—91) 26. Կազմել ընդգծված բայերի այն բոլոր  
հեկերը, վոր ցույց են տրված աղյուսակում.

Սահմանական յեղանակ	Հղձական յեղանակ	Պայմանական յեղ	Հարկադրական յեղ
Անցյալ կատա- րյալ	Ապառնի ապառնի	Անցյալ ապառնի	Ապառնի ապառնի
Թեքեցիր	Թեքես	Թեքեյիր	Կթեքես
			Պիտի թեքես
			Պիտի թեքեյիր

Դողն ել մի կոնից, գելն ել մյուս կոնից,  
Աչքդ բերեցիր—բանիդ տերը չես.  
Քաշում են տանից, քաշում են դոնից,  
Ու չես իմանում՝ վոր կողմը թռչես:

Թէ տանուտերին գանգատ եմ գնում,  
Բան չեմ վաստակում բացի դուշմանից,  
Դողերի հետքը իր տունն են տանում,  
Համեցեք դիվան ուզիր սրանից:

Նաև եցնում ե քեզ, մի յերկու բաժակ  
Տաք ջուր խմցնում կամ մի թաս ողի.  
— Դու գնա, պանի, միամիտ բնի՛ր,  
Ես աչքի լույսը կիանեմ գողի...»

(Հով, Թումանյան. «Հառաչանք»)

(Տես § 91) 27. Մրտագրել յեզ ընդգծել հարկադրական  
յեղանակով գործածված բայերը.

Ուրիշ փահմ ու սամթ ել ունի մեր բայլշեիկ Շիր-կանալը,  
Նա Շիր-դաշտի մեջքը գրկած կապսի մոտից ինչպես նաև,  
Ջընկեցով նորից պիտի թափիլի ծոցը Արփաշալի,  
Վոր պայքարի միջից խլի ուժը հիգրոֆիկացիալի:

Յերդիչներից վնր մեծն եր այն, վոր յերգել ե ուժի մասին,  
Շիր-կանալը փրփուր խասով շիր-առյուծ ե բաշը՝ լուսին:

Լույս թերերի փաղաքշանքով պիտի ցանցի վողջ գյուղերին,  
և գինամոն կալծակ փնջով ալրի նիրի մութ հյուղերին

Պիտի տեսնեն, վոր լուսաշաղ ասեղները ելեկաբոնի  
միտք ե ցնցում, զյուղին տառւմ, վոր անելիք ինքն ել ունի,  
Շիր-կանալը շիրի նման հանդացող մի պատանի—  
ալիքները փրփուր խասով լույս ապագան Հայաստանի:

Մեր բայլշեիկ Շիր-կանալը ուրիշ փահմ ու սամթ ել ունի.  
Ճիավորի սանձը ձեռքին հսկա ուժով ելեքաբոնի  
պիտի շարժի ու փոթորկի գործարաններ ու Փաբրիկներ,  
Ջրաղացներ, սպոցարան, ալեկոծի հող ու ցանքսեր:

Այն յերկերը, վոր գարերով քարացել եր ու ցամաքեկ՝  
այսորից ինտ պիտի լերգի աշխատանքի հղոր լերգերը  
Շատ ե լացել համը լացով Շիրակը իր դարգի մասին,  
իսկ այսորից նա մի թոքով թող տմենից բարձր խնսիե  
(Հ. Հակոբյան. «Բայլշեիկ և Շիր-կանալը»)

(Տես §§ 85—91) 27. Վորոսել բայերի լեղանակը, մամանակը  
բիզը յեզ գեմբը.

Ակորը քնած եր անհանդիստ. հաճախ դեն եր ձգում վերև  
մակը, ինչ վոր անկապ բառեր ասում, Մարդոն շարունակ նըս  
տած եր նրա գլխավերեց. արտի մորմաքով նա լսում եր Ակորի  
զառանցանքն ու մասյլ մտքերի մեջ ընկնում. նրա ծանրանալու  
հիտ ինքն ել եր ծանրանում:

Ակորն այրվում եր տենդից: Նրան թվում եր, թե մահնու  
կալի ատկից վառում են իրեն, եստո իբր վառվում ե տաւնը,  
ինքը ոտքրո թաշում, ընկնում դաշտեց, սարերը... Անցնում ե  
կանաչներով, սասնուրակ աղբյուրների մոտով, բայց ենց մոռ  
տենում ե, վոր խմի, ծարակը հագեցնի, ինչ վոր զինված մարք  
դիկ հարձակվում են ու չեն թողնում...

Նա տուջ ե զնում, հասնում և ձորակին: Նայում ե ձորին  
ու զարմանում. զիմացը բարձրացել ե մի հսկա արձան: Արձան

(Տես §§ 89—91) 26. Կազմել ընդգծված բայերի այն բոլոր  
ձեվերը, վոր ցույց են տրված աղյուսակում.

